16 ՄԱՅԻՍ 2000 ԵՐԵՔՇԱԲԹԻ 88 (2056)

Ազգ

Azg
armenian daily

Կադրային առաջին փոփոխությունները

Տիգրան Հակոբյանին կփոխարինի Էդվարդ Միլիտոնյանը

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի նշանակումից հետո հայտնի դարձան առաջին կադրային փոփոխությունները. կառավարության հասարակայնության եւ լրատվության հետ կապերի վարչության պետ եւ վարչապետի խորհրդական Էդվարդ Միլիտոնյանը ազատվել է իր պաշտոնից եւ նշանակվել կառավարությանն առընթեր տեղեկատվության եւ գրահրատարակչության վարչության պետ՝ այս պաշտոնում փոխարինելով Տիգրան Հակոբյանին, որը փաստացի հայտնվում է կադրային դաշտից դուրս, ինչպես նաեւ նրա տեղակալները՝ ի մասնավոր Արայիկ Մանուկյանը: Էդվարդ Միլիտոնյանի պաշտոնում նշանակվել է այդ նույն վարչության աշխատակից Մերի Հարությունյանը:

Վարչապետի որոշմամբ պաշտոններից ազատվել են ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական-ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանը եւ վարչապետի խորհրդական, կառավարության աշխատակազմի կադրերի վարչության պետ Անդրանիկ Քոչարյանը:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

Նախագահը փորձում է կանխել պետականության ճգնաժամը

ՈՍԿԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հանրապետության նախագահի համար Անդրանիկ Մարգարյանին վարչապետ նշանակելը հազիվ թե ամենացանկալի տարբերակն էր: Դեռ մարտի 3-ին Անդրանիկ Մարգարյանը վերջնագրային հայտարարություն ընթերցեց ողջ ժողովրդին ի լուր «Միասնության» անունից պահանջելով պաշտոնանկ անել նախագահի աշխատակազմի ղեկավար Սերժ Սարգսյանին եւ Ազգային հեռուստատեսության տնօրեն Տիգրան Նաղդալյանին: Այլ առիթներով էլ ներկայիս վարչապետը հիշ չի «տաշտել» նախագահին: Իսկ նման բաները չեն մոռացվում, եթե նույնիսկ ներվում են: Ուստի մտավախությունը, թե վարչապետի ու նախագահի ջուրը մի առվով համերա՞շխ է հոսելու՝ բավական մեծ է:

ԱՐԽԻՎԱՅԻՆ

Տես էջ 2

ՄՈՍԿՎԱ

ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն փորձում են սեղ խրել Հայաստանի եւ Ռուսաստանի հարաբերություններում

Հայտարարել է գեներալ-գնդապետ Լեոնիդ Իվաշովը

ՄՈՍԿՎԱ, 15 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: «ԱՄՆ-ը, ՆԱՏՕ-ն եւ, մասնավորապես, Երեւանում ԱՄՆ-ի դեսպանությունը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի զինվորական ղեկավարները փորձում են սեղ խրել Հայաստանի եւ Ռուսաստանի հարաբերություններում, ծախսողել ռազմական համագործակցությունը մեր պետությունների միջեւ»: Այսպիսի հայտարարությամբ Մոսկվայում մայիսի 15-ին հանդես է եկել ՌԴ պաշտպանության նախարարության միջազգային ռազմական համագործակցության գլխավոր վարչության պետ գեներալ-գնդապետ Լեոնիդ Իվաշովը:

Նա չի թաքցրել, որ ռուս զինվորականները «որոշ խանդով» են վերաբերվում հայ զինվորականներին իրենց կողմը գրավելու եւ Հայաստանի ու Ռուսաստանի զինված ուժերի միջեւ սերտ բարեկամությունը խախտելու Վաշինգտոնի փորձերին: Սակայն, Իվաշովի կարծիքով, «հայ եւ ռուս զինվորականների միջեւ հարաբերությունները շարունակում են խոր բարեկամական մնալ, ուստի այդ առնչությամբ Ռուսաստանն այսօր մտահոգության առիթ չունի»: Գեներալը բացեիբաց հայտարարել է, որ պաշտոնական Մոսկվան, այդ թվում նաեւ Ռուսաստանի զինվորական ղեկավարությունը «մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Հայաստանի նկատմամբ», որի էությունը երկկողմ համագործակցության ներկա մակարդակը պահպանելու ձգտման մեջ է:

«Մենք ցանկանում ենք, որ Հայաստանը կայուն եւ ուժեղ լինի», հայտարարել է գեներալ-գնդապետ Իվաշովը՝ Սնարքի թղթակցի խնդրանքով մեկնաբանելով Հայաստանի ներքաղաքային գործընթացներին Ռուսաստանի գեներալիտետի «ներգրավման» մասին բազմաթիվ կեղծ լուրերը: Նշելով, որ ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն առավել մեծ հաջողությունների են հասել «վրացական եւ ադրբեջանական ուղղություններում», գեներալն ասել է, որ ԱՄՆ-ը «Երեւանին գազարով» կամ կարճաստեղ փոքրիկ օգնության խոստումով «գայթակղելու» փորձեր է կատարում:

Տես էջ 8

Եվրոպայում աղասան փնտրող հայ փախստականները դարձել են խարդախության զոհ

ԵՐԵՎԱՆ, 15 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մայիսի 11-ի լույս 12-ի գիշերը Վրաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը տեղեկացել է, որ Հայաստանից մոտ 200 փախստականներ գտնվում են Փոթիում եւ պահանջում նավ՝ Եվրոպա տեղափոխվելու համար: Ձեռնարկված միջոցների շնորհիվ մայիսի 14-ի գիշերը, մոտավորապես ժամը 1.30-ին փախստականների ավտոբուսը հասել է հայ-վրացական սահմանը Բագրատաշեն անցակետում եւ վերադարձել Հայաստան:

Ինչպես «Նոյյան տապանին» հայտնեցին ՀՀ ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից, Վրաստանում Հայաստանի դեսպան Գեորգի Խուրոտեը, ներքին գործերի նախարարության շտաբի պետ Ղազարյանը եւ մի շարք այլ պաշտոնատարներ անմիջապես մեկնել էին դեպքի վայր: Դեսպան Խուրոտեի խնդրանքով հարցին միջամտել է նաեւ Վրաստանի Սեւծովյան տարածաշրջանի հայկական թեմի առաջնորդ Տեր Աբգարը:

Տեղում պարզվել է, որ մայիսի 10-ին շուրջ 175 մարդ՝ հիմնականում փախստականներ Սումգայիթից եւ Բաքվից, երեւանյան «Ահաս» տրանսպորտային կազմակերպությանը պատկանող փոխադրամիջոցներով ժամանել էին Փոթի: Դեռեւս ապրիլ ամսին ոմն Ալեքսանդր Ղամբարյան Հայաստանի կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչություն այցելած մարդկանց հաշվառում է անցկացրել: Այնուհետեւ նա նրանց հավաստիացրել էր, թե իբր ունի սերտ կապեր ժնեւում ՄԱԿ-ի փախստականների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպության հետ եւ նախաձեռնում է ստեղծել փախստականների խումբ՝ Բուլղարիայի միջանցքով Բելգիա տեղափոխելու համար: Սա մատուցվել է որպես «իրագործման» համար Ղամբարյանը դրամային գանձումներ էր իրականացրել:

Մայիսի 13-ին անմիջական տեսական աշխատանքի շնորհիվ փախստականները, համոզվելով իրենց խաբված լինելու մեջ, ցանկություն են հայտնել վերադառնալ Հայաստան: Մայիսի 14-ի առավոտյան Ղամբարյանը մեկուսացվել է եւ կազմակերպվել է նրա հանձնումը հայկական կողմին:

Վրացական իշխանությունները տրամադրել էին մեկ ավտոբուս, որը մինչեւ Հայաստանի սահման է հասցրել խարդախության զոհ դարձած փախստականներին, ինչպես նաեւ մեկ շաբաթ օգնության մեքենա՝ 5 ամսական մի հիվանդ երեխայի տեղափոխելու համար:

Թուրքիան շարունակում է զինվել

ԱՆԿԱՐԱ, 15 ՄԱՅԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Թուրքիայի պաշտպանության նախարարությունը դիմել է Մ. Նահանգներին եւս մի ռազմանավ ստանալու պահանջով: ԱՄՆ պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ Պենտագոնն արդեն իսկ Թուրքիային է տրամադրել 6 «Փերի» ռազմանավ՝ յուրաքանչյուրը 60 մլն դոլար արժողությամբ: Պենտագոնը զեկուցագիր է ուղարկել ԱՄՆ Կոնգրեսին, որում կոչ է արել բավարարել Թուրքիայի դիմումը՝ ընդգծելով, որ գործարքը չի հարուցի ուժերի տարածաշրջանային բալանսի խախտում եւ չի վնասի կիպրոսյան ճգնաժամի կարգավորմանը: «Միլլիյեթ» օրաթերթը տեղեկացնում է, որ Թուրքիայի զինված ուժերի համար AWACS համակարգեր եւ գրոհային ուղղաթիռներ ձեռք բերելու եթայամարգության արդյունքները կամփոփվեն հունիսի 2-ին: Գործարքների ընդհանուր արժեքն է շուրջ 4,5 մլրդ դոլար: Նշենք, որ գրոհային ուղղաթիռների հայտարարությունում ֆրանսիական ընկերությունների մասնակցությունը շատերի կարծիքով պատճառ դարձավ Հայկական ցեղասպանության հարցի վերջնական հաստատման ձախողմանը:

Պուտինը կվերահսկի Ռուսաստանի շրջանները

ԱՐԽԻՎԱՅԻՆ

ՄՈՍԿՎԱ, 15 ՄԱՅԻՍ, ՍՆԱՐՔ: Le Temps-ի կարծիքով, Ռուսաստանը յոթ դաշնային շրջանների բաժանելու առնչությամբ նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանագրի հրապարակումը նախագահությունում հանդիսանում տեղական իշխանությունների: Բորիս Ելցինի նախագահության ընթացքում որոշ տեղական ղեկավարներ իրենց շրջանները վերածել էին իսկական հարեւանակալվածների՝ զարգացնելով առաջին նախագահի կողմից առաջարկված ինքնավարությունը:

Այսպես, օրինակ, Սամարայի նահանգապետ Կոնստանտին Տիտովն առաջարկել էր, որպեսզի դաշնության սուբյեկտները կարողանան ԱԱՀ-ի հետ անմիջականորեն աշխատել՝ շրջանցելով իշխանության դաշնային մարմինները: Իր հրամանագրով Վլադիմիր Պուտինը դրսեւորել է Բորիս Ելցինի, որը մշտապես ընդլայնում էր տեղական իշխանության լիազորությունները, խաղաղականությունը չվերսկսելու իր մտադրությունը, գրում է Le Temps-ը:

ԱՄՆ

Մուրադ Թոփալյանի դեմ 5 մեղադրանքներից 3-ը վերացան

Ամիսներ առաջ «Ազգը» տեղեկացրել էր Մ. Նահանգներում ՀՅԴ Հայ դատի հանձնախմբի նախագահ Մուրադ Թոփալյանի նկատմամբ ֆեդերալ դատախազության առաջ բերած 5 մեղադրանքներին, որոնցից գլխավորը ահաբեկչական գործունեության եւ դավադրության կազմակերպումն էր: Բարեբախտաբար, ամերիկյան դատախազությունը մայիսի 11-ին հետս է կոչել մեղադրանքներից ամենալուրջ 3-ը, շնորհիվ պաշտպանական կողմի ջանքերի: Այժմ մնում է 2 մեղադրանք՝ պայթուցիկ նյութեր ձեռք բերելու եւ դրանք ամերիկյան մի մանկապարտեզից 150 մետր եւ բենզալցման կայանից 200 մետր հեռավորությամբ գտնվող պահելու վերաբերյալ: Համեմատաբար դրանք մեղմ հանցանքներ են համարվում եւ մեղավոր ճանաչվելու դեպքում Մ. Թոփալյանը կարող է բանտարկվել մինչեւ 37 ամիս: Նկատի ունենալով Թոփալյանի ընտանեկան հանգամանքները (նրա 6-ամյա դուստրը տառապում է արյան քաղցկեղով), դատախազությունը որոշել է դատավարության սկիզբը հետաձգել մինչեւ առաջիկա նոյեմբեր: Դատապաշտպանների խումբը շարունակում է աշխատել:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ամեն մեկն անում է իր գործը կարեցածի չափով

Հարցազրույց ԼՂՀ գլխավոր դատախազ Մավրիկ Ղուկասյանի հետ

ԼՂՀ ներքաղաքական կյանքում դեռեւս «տաք» է մարտի 22-ի ահաբեկչության թեման: Հիշյալ գործի նախաքննության ընթացքում «Ազգն» անդրադարձել է պարբերաբար: Սակայն տպագրվող բացառիկ հարցազրույցը ԼՂՀ գլխավոր դատախազ Մավրիկ Ղուկասյանի հետ. նոր պարզաբանումների անհրաժեշտության ծնունդ է:

– Պրն Ղուկասյան, մարտի 22-ի ահաբեկչության փաստով մեղադրվող դատապաշտպանների մի մասը, հիմնականում Հայաստանի Հանրապետությունից եկած, հրաժարվել են իրենց պարտականությունների հետագա կատարումից: Իրենց հրաժարականը նրանք պատճառաբանել են վատ տարվող նախաքննությամբ եւ իրենց պաշտպանյալներին տեսակցելու արգելքով:

– Նախ, հարցը ճշտենք՝ ոչ թե փաստաբաններն են հրաժարվել, այլ իրենց պաշտպանյալները, որովհետեւ գործող օրենսդրության համաձայն հրաժարվելու իրավունքը վերապահված է պաշտպանյալներին: Ըստ երեւույթին, ձեր նշած փաստաբանները լավ չեն ծանոթ ՔՊՕ-ին, այլապես նման կամայական հայտարարություններ չէին անի:

Ինչ մնում է մեղադրվող անձանց՝ հայաստանցի դատապաշտպաններից հրաժարվելուն, ապա դա պատճառաբանվում է այն բանով, որ դժգոհ են իրենց փաստաբանների ոչ որակյալ պաշտպանությունից: Սա է ճշմարտությունը:

– **Կարելի է ենթադրել, որ հիշյալ մեղադրվողները մնացել են առանց դատապաշտպանների՞...**

Տես էջ 3

ՈՒՇԱԳԻԿ

Սադրա՞նք, թե՞ հայկական հիվանդություն

Դիմակավորված մարդիկ դանակահարել են ազատամարտիկ, Արկադի Տեր-Թադեւոսյանի զինակից Սերժ Պետրոսյանին

Վիրակի օրը, գիշերվա ժամը 3-ի սահմաններում անհայտ, դիմակավորված մարդիկ արցախյան պատերազմի հերոս Արկադի Տեր-Թադեւոսյանի առանձնատան մոտակայքում դանակահարել են գեներալի հավատարիմ զինակից Սերժ Պետրոսյանին: Ազատամարտիկը, որ անցել է արցախյան ողջ պատերազմը, կարողացել է ծախողել պլանավորված սադրանքը:

Երեկ հրավիրված մամլո ասուլիսում Արկադի Տեր-Թադեւոսյանի պատմելով դիմակավորված մարդիկ եղել են սեւ շորերով, ունեցել են ռադիոկապ, ատրճանակ, սակայն լավ պատրաստված չեն եղել: «Հավանաբար նրանք պատկանել են ինչ-որ խմբավորման: Սերժը նկատել է նրանց, մեկին տապալել գետին, երկրորդը սուր, ծակող գործիքով հարվածել է նրան: Սերժը զուտ պատահաբար է փրկվել: Այդ ընթացքում ես եղել եմ տանը: Թշնամիներ չունեմ, չեմ ուզում ենթադրություններ անել: Ես ինձանից որեւէ նյութական արժեք չեմ ներկայացնում, որպեսզի ինձ վրա փող աշխատեն: Գիտեմ դուք ուզում եք, որ ինչ-որ մեկին կասկածեմ, բայց ցանկանում եմ դուք լրագրողներդ վերլուծեք: Ո՞ւմ եմ կասկածում: Ձեր տված հարցը ձեզ եմ ուղղում»:

Այնուամենայնիվ, Արկադի Տեր-Թադեւոսյանը որոշ ենթադրություններ արեց: Նախ՝ այս սադրանքը Մանվել Գրիգորյանի եւ «Երկրապահի» հետ կապ չունի: «Երբ ասում ենք հանցավոր խումբ, «Երկրապահին» նկատի չունենք: Ես բացառում եմ, որ սա «Երկրապահի» կամ Մանվել Գրիգորյանի արածն է: Ճիշտ է՝ «Երկրապահի» ղեկավարության հետ ունենք տարաձայնություններ»: Երկրորդ՝ այս ակցիան ուղղված չէր բանակի դեմ, «Ես, որպես պաշտպանության նախարարի օգնական, այդպես եմ կարծում: Այն կազմված չէ բանակի հետ, հավանաբար կազմված է մեր գործունեության հետ»:

Արկադի Տեր-Թադեւոսյանը վերջերս հիմնեց «Ազատամարտիկ վետերանների միություն» հասարակական կազմակերպությունը՝ «Երկրապահից» անկախ, որի գործունեության շրջանակը մեծամասամբ հանդիսանում է «Երկրապահի» առաքելությանը, այն է՝ զոհված ազատամարտիկների ընտանիքների հանդեպ հոգատար վերաբերմունք, արցախյան պատերազմի վետերաններին արժանապատիվ ծերություն: Տեր-Թադեւոսյանի այս քայլը դժգոհությամբ ընդունվեց «Երկրապահի» ղեկավար որոշ երեւելիների շրջանում: Ու որպեսզի փարատվեն քաղաքական շրջանակներում շրջանառության մեջ դրված ենթադրությունները, թե Տեր-Թադեւոսյանը նախագահ Քոչարյանին սատարելով պաշտոնի է ձգտում, հավակնում պաշտպանության նախարարի աթոռին, գեներալը դիմում է գրել ու խնդրել իրեն ազատել պաշտպանության նախարարի օգնականի պաշտոնից:

«Կոմանդոսը» մամլո ասուլիսի ժամանակ

Մենք չենք կարող չհավատալ Տեր-Թադեւոսյանի անկեղծությանը, որովհետեւ պատերազմ անցած եւ իր կյանքը հայրենիքի զոհասեղանին դրած ազատամարտիկն անկեղծ չլինել չի կարող: Սակայն, եթե ավելի անկեղծ լինենք, նախագահ Քոչարյանի քաջալերումով (ենթադրաբար) եւ Արկադի Տեր-Թադեւոսյանի նախաձեռնությամբ կազմավորված «Ազատամարտիկ վետերանների միություն» հասարակական կազմակերպության երեւան գալը հակադրություն է «Երկրապահին»: Դա հիշեցնում է մեր նախկին նախագահ Տեր-Պետրոսյանի ծանոթ ձեռագիրը, երբ ստեղծվում էր «կոոպերատիվ» Դաշնակցություն՝ ի հակադրություն ՀՅԴ-ի, «կոոպերատիվ» ռամկավարներ՝ ի հակադրություն ՀՌԱԿ-ի:

Ինչո՞ւ երեկ գիշեր կատարվեց սադրանք: Քանի որ Արկադի Տեր-Թադեւոսյանը լրագրողներիս խորհուրդ տվեց սեփական վարկածներն առաջ քաշել, փորձենք կենտրոնանալ երկու վարկածի շուրջ: Առաջին՝ գեներալին հավատարիմ Սերժ Պետրոսյանին վիրավորել են Տեր-Թադեւոսյանի գործունեությունից դժգոհ շրջանակներ, որպես ուղղակի սպառնալիք Տեր-Թադեւոսյանին: Երկրորդ՝ սադրանքն իրականացվել է յուրայինների կողմից, վարկաբեկելու «Երկրապահին»: Սրա համար բարենպաստ հողն իսկ առկա է:

«Ազատամարտիկ վետերանների միություն» նորաստեղծ հասարակական կազմակերպության նախաձեռնող խումբը շնորհավորում է Անդրանիկ Մարգարյանին՝ ՀՀ վարչապետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, հուսով է, որ նոր կազմավորվելիք կառավարությունը անգիջում պայքար կմղի կլանային համակարգերի եւ հովանավորչության դեմ, երկրում կհաստատի օրենքի գերիշխանություն, հայտարարվեց ասուլիսում:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԱՆԱԿՈՒՄ

Նախագահը փորձում է կանխել պետականության ճգնաժամը

Սկիզբը էջ 1

Անդրանիկ Մարգարյանին վարչապետ նշանակելու հրամանագիրն ստորագրելով, նախագահ Ռոբերտ Քոչարյանն ապացուցեց, որ կարողանում է վեր կանգնել անձնական համակրանքներից ու հակակրանքներից, պահպանել քաղաքական դրագմատիզմը: Համաձայն չեմ այն վերլուծաբանների հետ, ովքեր անմիջապես սկսեցին աղմկել, թե նախագահն այս նշանակմամբ տակտիկական խնդիր է լուծում՝ մոտ ապագայում Անդրանիկ Մարգարյանին «փչացնելու», նրան սատարող քաղաքական ուժը վարկաբեկելու եւ հրապարակից դուրս մղելու անբարո դիտավորությամբ: Նախ, այդպիսի նենգությունը վիրավորական եւ անվայել եմ համարում երկրի ղեկավարի համար, երկրորդ՝ կարծում եմ, որ հիմա մենք կանգնած ենք շատ ավելի կարեւոր խնդրի առաջ: Հրամայական անհրաժեշտություն է դարձել վերին ոլորտների համերաշխության ապահովումը, այլապես երկիրը համակած սոցիալ-տնտեսական ճգնաժամը սպառնում է վերածել պետականության ճգնաժամի: Հազիվ թե որեւէ մեկը հիմա ավելի շոշափելիորեն է զգում այդ վտանգը, քան նախագահն ինքը:

Իհարկե, Ռոբերտ Քոչարյանն այնքան միամիտ չէ, որ բարձրաձայն նման բան հայտարարի: Սիա եւ հավատում է, թե վարչապետի պաշտոնում Հանրապետական կուսակցության ղեկավարին նշանակելը բացատրվում է խորհրդարանական ընտրություններում «Միասնություն» դաշինքի հաղթանակով: Բայց այդ հաղթանակից արդեն շատ ջրեր են հոսել, մեկ տարի առաջվա «Միասնությունը», Կարեն Դեմիրճյան-Վազգեն Սարգսյան հզոր երկյակի գլխավորությամբ, միանգամայն այլ որակ ու կշիռ ուներ, քան այժմ: Ուստի խոսել քաղաքական դաշտում ստատուս քվոն պահպանելու մասին, առնվազն նշանակում է հնչորեն թաքցնել իրական դրդապատճառը: Այն է՝ նախագահ-խորհրդարան-կառավարություն ներդաշնակություն ապահովելու հրամայականը, անկախ այն բանից, թե այս թեւերից որը ժողովրդի մեջ ներկա պահին ի՞նչ «կշիռ» ունի:

Եթե Աժ մեծամասնությունն իսկապես սատարի կառավարությանը, ընդսմին, ոչ թե լուծարվելու վախից, այլ պահի պատասխանատվության գիտակցությունից դրդված, եւ եթե վարչապետն իր հերթին գիտակցի այսուհետ եւս նախագահին հակադրվելու քաղաքականության ողջ կործանարարությունը, ապա իսկապես համատեղ ուժերով կարելի կլինի կանխել ճգնաժամերից վտանգաբերի՝ պետականության ճգնաժամի ծագումը: Կանխել անցանկալի զարգացումների վտանգը, պատնեշ դնել հակամարտ ուժերի թշնամանքի խորացման եւ հնարավոր բախումների ճանապարհին՝ ահա Անդրանիկ Մարգարյանի կառավարության գլխավոր առաքելությունը: Մնացածը, այդ թվում նաեւ այն, թե «հիմա արդեն մենք շատ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնենք տնտեսական խնդիրների լուծմանը, վարենք ակտիվ, միգուցե նույնիսկ ագրեսիվ տնտեսական քաղաքականություն, որպեսզի հանրապետության հիմնական թեման դառնա տնտեսական ծրագրերի իրականացումը», ինչպես բանաձեւեց նախագահն այս կառավարության խնդիրը՝ վարչապետին ներկայացնելիս, որքան էլ սարսափելի թվա, երկրորդական է: Կստացվի՞, լավ: Չի՞ ստացվի՝ ավելի մեծ ողբերգություն չէ, քան պետականության ճգնաժամը: Մանավանդ, եթե նկատի առնենք, որ ներքաղաքական կայունություն ապահովելը, ինչ էլ լինի, դրական ազդեցություն կունենա տնտեսության, ժողովրդի սոցիալական վիճակի վրա: Պատրանքներ չպիտի ունենալ՝ դա շատ դժվար եւ շատ դանդաղ գործընթաց է լինելու: Մեծապես կախված է լինելու բազմաթիվ այլ գործոններից, արտաքին ու ներքին կոնյունկտուրայից: Ամենագլխավորը՝ կառավարությունը, նորանշանակ վարչապետը քաղաքական կամք ունենալո՞ւ են մեր տնտեսության կլանայնությունն ընդհանրապես ջախջախելու համար, թե՞ փորձելու են վերածելել «ազդեցության գոտիները»՝ դուրս մղելով անցանկալիներին ու թեւի տակ առնելով «յուրայիններին»:

Անդրանիկ Մարգարյան վարչապետի կառավարման հնարավորություններին ծանոթ չենք: Գուցե ունի, գուցե՝ ոչ, դա դեռ հետո կերեւա: Բայց Անդրանիկ Մարգարյան քաղաքական գործիչը, այնուամենայնիվ, նորելուկ չէ եւ չի կարող չհասկանալ, որ երկրի տնտեսական դաշտում շահագրգիռ ներդրումներ անող սվերային գործարարները՝ յուրային, թե ոչ յուրային, միեւնույն սրիկաներն են, միեւնույն պատուհասը՝ պետության ու ժողովրդի համար, որ ծաղրի են հանում ազատ շուկա, ազատ մրցակցություն հասկացությունները, արգելակում ամեն կարգի տնտեսական աճ: Արմատախիլ անելով այս չարիքը, կառավարությունն ամենից առաջ կլուծի... իր երկարակեցության խնդիրը: Այլապես դատապարտված է:

Վահրամ Աղաջանյանի մայրը շղթայազերծ որդու ձերբակալությանը

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 15 ՄԱՅԻՍ, ՏՆԱՐ- Մայիսի 13-ի առավոտյան ինֆարկտից վախճանվել է դարաբաղցի լրագրող Վահրամ Աղաջանյանի մայրը:

Ինչպես հայտնի է, Վահրամ Աղաջանյանը ձերբակալվել էր իր ենթադատական հրապարակումների համար եւ դատապարտվել 1 տարի ազատազրկման՝ ըստ զրպարտանքի եւ վիրավորանքի համար նախատեսված հոդվածի: Մարտի 27-ին Լեռնային Դարաբաղի Գերագույն դատարանի կոլեգիան կալանքը փոխարինեց պայմանական պատիժով՝ երկու տարի փորձնական ժամկետով:

Աղաջանյանի ասելով, այն ժամանակ, երբ ինքը կալանքի տակ էր, մայրը միկրոինֆարկտ էր տարել: Ոռգա Աղաջանյանի հուղարկավորությունը տեղի է ունեցել այսօր՝ մայիսի 15-ին:

«Ազգի» աշխատակիցները խորապես ցավակցում են իրենց գործընկերոջն ու հանգուցյալի մյուս բոլոր հարազատներին:

«Բազում ֆիրման» ԱՄՆ առաքեց մեկ մլն-րդ արտադրանքը

Վանաձորի «Բազում ֆիրմա» արտադրական կոոպերատիվում օրերս նշանակալի իրադարձություն էր: Ամերիկյան «Ամերեքս օֆ Կալիֆորնիա» ֆիրմային առաքվել է մլն-րդ արտադրանքը: Համագործակցությունը սկսվել է 1996 թ. սեպտեմբերից: Ամերիկացիները Վանաձոր են առաքում արտադրանքի տեխնիկատնտեսական փաթեթը, հումքը, օժանդակ նյութերը, դիզայնը, իսկ «Բազում ֆիրման» պատվիրատուին է ուղարկում պատրաստի արտադրանքը: Համագործակցության ընթացքում թողարկվել են ավելի քան 300 նմուշի մանկական, կանացի, տղամարդու բաճկոններ, անձրեւանոցներ, տաբատներ, նորածնի տարբեր տեսակի հագուստ: Ամերիկացիների վստահությունն ամրապնդվեց՝ արտադրանքի առաջին խմբաքանակը՝ 30 հազար կանացի բաճկոններն ստանալուց հետո: 1997 թ.-ից պատվերների քանակը կտրուկ ավելացավ եւ անցած տարիներին ԱՄՆ ուղարկված արտադրանքի քանակն այսօր արդեն հասել է 1 մլն-ի: Այժմ ֆաբրիկայում աշխատում է 800 մարդ: Ձեռնարկությունը պատրաստ է պատվերներն ավելանալու դեպքում զգալիորեն ընդլայնել արտադրանքի ծավալը: «Ի տարբերություն շատ հիմնարկ-ձեռնարկությունների, մեր ֆաբրիկան պարտաճանաչ կատարում է հարկային պարտավորությունները, ժամանակին է մուծում նաեւ կոմունալ եւ մյուս վճարները, ասում է ֆաբրիկայի գործադիր տնօրեն Յուրի Միքայելյանը: Աշխատավարձերը վճարում ենք ժամանակին, առանց ուշացումների: Մայիսի 13-ին 10620 բաճկոն առաքվեց ԱՄՆ, որոնց մեջ՝ 1 միլիոներորդ տղամարդու բաճկոնը, որը «Բազում ֆիրման» հատուկ փաթեթավորմամբ նվիրել է «Ամերեքսի» նախագահ Այրա Գենջերին՝ հղելով ջերմ բարեմաղթանքներ»:

Նշանակալի այդ իրադարձության առիթով ֆաբրիկայի աշխատողներին բարեմաղթանքի եւ շնորհակալության խոսք է հղել գլխավոր տնօրեն Ռաֆայել Մխիթարյանը: Իսկ գործադիր տնօրենը մեկ անգամ եւս ողջունելով բոլորին, առաջավոր բանվործառայողներին հանձնեց դրամական պարգեւներ:

Հոկտեմբերի՝ որտեղից կառաքվի ԱՄՆ:

Մ. ՄԻԿՈՅԱՆ
Վանաձոր

Ոռոգման ջրագիծ Արեւաշողում

Օրերս Լոռու մարզի Արեւաշող գյուղում հյուսիս-արեւմտյան շրջանների գյուղատնտեսության զարգացման ծրագրի շրջանակներում շահագործման հանձնվեց ոռոգման ջրագիծ, որի երկարությունը 5,3 կմ է: 65 հազար ԱՄՆ դոլար արժեցող ծրագիրը կյանքի է կոչել Վանաձորի «Տարոն 606» շինկազմակերպությունը: Ջրագծի շահագործմամբ շուրջ 3 անգամ կրճատվեց ոռոգման ջրի կորուստները՝ մինչեւ գյուղ հասնելը եւ հնարավոր կլինի ոռոգել 140 հա վարելահող եւ 80 հա տնամերձ:

Մ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562863, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@armenco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 529353
Համակարգչային ծառայութիւն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

«Ենք որոշես անհաս պատգամավորներ, չենք կարող մնալ դահլիճում եւ մասնակից լինել ծավալվող գործընթացին: Հոկտեմբերի 27-ից հետո, ինչը որակավորվեց իբրեւ պետական հեղաշրջման փորձ, եւ հանրապետության նախագահն ինքը չժխտեց, որ կատարվածը քաղաքական նկատառումներով ոճրագործություն էր, «Միասնություն» դաշինքը, որի առաջնորդները եւ անդամները սպանվեցին խորհրդարանում, ոչ միայն վճռական չեղավ գործի բացահայտման ուղղությամբ, այլեւ իր հետագա քայլերով հնարավորություն տվեց վերջերս նախագահին պնդելու, որ «Միասնություն» դաշինք չկա: Անցած վեց ամսվա ընթացքում խախտվեց Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի հիմնական կարգախոսը՝ «Կառուցենք եւ պաշտպանենք»: Հոկտեմբերի 27-ից հետո ոչինչ չի կառուցվել, ընդհակառակը՝ փլուզվել է: Վտանգված են նաեւ պաշտպանական կառույցները, մենք կարող ենք կորցնել ոչ միայն մեր հազարավոր ընկերների արյան գնով ձեռք բերվածը, այլեւ եղածը: Դաշինքը վերջերս նաեւ միասնական չեղավ վարչապետի առաջադրման ժամանակ, ՀԺԿ-ն եւ ՀՀԿ-ն լուռ համաձայնվեցին նախագահի հետ, որ «Միասնություն» այլեւս չկա», երեկ խորհրդարանական եռօրյայի մեկնարկին հայտարարեց պատգամավոր Մյասնիկ Մալխասյանը, իսկ մինչ այդ ԱԺ խոսնակ Արմեն Խաչատրյանը արդեն ընթերցել էր 12 պատգամավորների անունները, որոնք վերը նշված հիմնավորմամբ դուրս եկան «Միասնությունից» եւ «Կայունությունից»: Գրեթե բոլոր պատգամավորները «երկրապահ» են՝ Ռուբեն Գեւորգյան, Սուրեն Խաչատրյան, Հրանտ Գրիգորյան, Սամվել Սաղաթելյան, Արա Կեսիկյան, Ղուկաս Ուլիխանյան, Մյասնիկ Մալխասյան, Սասուն Միհայելյան, Արամ Հովհաննիսյան... «Կայունությունից» դուրս եկան Հակոբ Հակոբյանը եւ Երեմ Կարապետյանը:

Մյասնիկ Մալխասյանը իրենց պահարգանը «Միասնությանը» ձեւակերպեց բավական դիվանագիտորեն՝ համապատասխան հղումներ կատարելով հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի խոսքին, իսկ նոր վարչապետ Անդրանիկ Մարգարյանին անձնապես դրական գնահատեց՝ չմոռանալով, սակայն, ընդգծել, որ ԵԿՄ-ն նրա թեկնածությունը չի առաջադրել: Տիգրան Թորոսյանը, որին «Ազգը» խնդրեց մեկնաբանել երկրապահների գնահատականը վերջին դեպքերին, հակիրճ էր. «Դա իրենց կամքն է, ինչպես կուզեն, այդպես էլ թող վարվեն: Կանոնակարգն իրենց իրավունք տալիս է»: Փաստենք նաեւ, որ հիշյալ բոլոր պատգամավորները մեծամասնական ընտրակարգով են ստացել պատգամավորական մանդատ: ԱԺ փոխխոսնակ Գագիկ Ասլանյանը, որը նաեւ ՀԺԿ քաղաքական խորհրդի անդամ է, «Միասնության» պառակտման հարցում փորձում էր առավել լավատես լինել. «Հարցը չեմ ուզում այդպես դիտարկել, ես համոզված եմ, որ «Միասնությունն» արժեք է, որը պետք է պահպանվի, իսկ այն, որ ՀԺԿ-ն չառաջադրեց եւ չպաշտպանեց Անդրանիկ Մարգարյանի թեկնածությունը, թելադրված է մեր մոտեցմամբ: Կուսակցության ղեկավարի դերը շատ ավելի անհրաժեշտ է Ազգում, քան գործադիր իշխանության մեջ: Անդրանիկ Մարգարյանը ՀՀԿ նախագահն էր եւ «Միասնություն» խմբակցության ղեկավարը: Մենք «Միասնություն» դաշինքի միացյալ նիստում առաջադրել ենք այլ թեկնածուներ, բայց ՀՀԿ-ն պնդեց իր մոտեցումը: Մեր կարծիքով, գործադիր իշխանությունը խոցելի է՝ կազված իր գործունեության բնույթի հետ, եւ քաղաքական գործչի տեղը, ինչպիսին Անդրանիկ Մարգարյանն է, պետք է լիներ Ազգ-ում, որպեսզի առաջ մղվեր նաեւ գաղափարախոսական աշխատանքը»: **«Ազգի»** այն հարցին, թե ՀԺԿ-ն ակնկալո՞ւմ է պորտֆելներ Անդրանիկ Մարգարյանի կառավարության կազմում, Գագիկ Ասլանյանն արձագանքեց շրջահայաց. «Կառավարության կազմավորման հարցը վարչապետի իրավասությունն է, նա ինքը պետք է ընտրի նախարարներին, որոնց հետ աշխատելու է: Հանուն երկիրն այս վիճակից դուրս բերելու, ՀՀԿ-ն պատրաստ է առավելագույնս օգնել կառավարության գործունակ աշխատանքին՝ կազմակերպել Ազգ-կառավարություն համատեղ գործունեությունը»: Այս գնահատականից կարող ենք եզրակացնել, որ ՀՀԿ-ն, ինչպես ՀՅԴ-ն, չի պնդելու նախորդ կառավարության կազմում ընդգրկված իր երկու նախարարների պորտֆել

ԱԶԳ

Ազգի կյանք

«Արդյոք ովքե՞ր են...»

Արձանագրենք, որ Հայաստանի քաղաքական դաշտում այսօր լրիվ բացակայություն է թե ընդդիմադիր եւ թե կողմնակից ուժերի, առաջինն էլ, երկրորդն էլ իրենց սպառեցին այս տասը տարիների ընթացքում: Այդ իսկ պատճառով ընդդիմադիր ուժն այժմ կարող է հաճախակի եւ հեշտությամբ անցնել ճամբարից ճամբար՝ հանուն «կուսակցական» շահի: Այս համապատկերում հանկարծ քաղաքական ասպարեզ է դուրս գալիս հիշյալ միությունը՝ ներկայանալով որպես նոր ու ննջադատող ուժ: Եթե իրենց չճանաչեինք՝ «տեղափոխվեց» ՀՌԱԿ, եւ փորձեցին համատեղ ջանքերով ճեղքել այդ կուսակցությունը: Այնուհետեւ հերթական անգամ առանձնացավ ու ստեղծեց մի նոր կուսակցություն... Իսկ այսօր վերսին իր հարազատ ՀՀՇ-ի հետ է:

Կամ՝ հիշենք այն ժամանակ ազգային անվտանգության վարչությունը ղեկավարող Դավիթ Շահնազարյանին, որը Համբարձում Գալուստյանի սպանությունից անմիջապես հետո խորհրդարանում հայտարարեց, թե մեկ ամսում կբացահայտի այդ գործը: Իսկ Բաբկեն Արարքցյանը խոստացավ, որ չբացահայտվելու դեպքում ինքը հրաժարական թյուններին ծանրությունն, անշուշտ, միայն Սիրադեղյանի խղճին չէ. պարզից էլ պարզ է, որ գործել է կազմակերպված մի հանցախումբ: Սիրադեղյանի վերջին անհետացումն այս ակնարկների հետեւանքն էր. նրա հետ հանցավորության անխախտելի շղթայով կապված իր ՀՀՇ-ական ընկերներն օգնեցին, որպեսզի անհետանա, այլապես դատարանում հնչելու էին իրենց բոլորի անունները:

Քրեական պատասխանատվության եւ անխուսափելի դատարանի առջեւ կանգնելու վախն է, որ այսօր այդ անձանց մղում է միավորվելու ընդհանուր դաշինքում: Շուտով նրանց կմիանան համակիր եւս մի քանի կուսակցություն ու կազմակերպություն, որոնք նրանցից ետ չեն մնում իրենց սեւ գործերով:

Իսկ ինչո՞ւ դաշինքում անմիջապես չմիավորվեցին ՀՀՇ-ն, «Շամիրամը», «Ժողովրդավարական Հայաստանը» եւ մյուսները: Որովհետեւ մեկ փուլով այդ գործողությունն աննկատ կանցներ եւ թողած տպավորությունը թույլ կլիներ, մինչդեռ այսպես ասպիճանաբար միավորվելով տպավորություն են ստեղծում, թե իրոք մի նոր ու լուրջ քաղաքական ուժ է գոյանում, եւ այն հետզհետե համալրվում է: Սա նրանց հերթական հաշվարկն է, ուր, ինչպես միշտ, միայն իրենց շահերն են հաշվի առել. սակայն այս անգամ ժողովուրդն արդեն չի ծափահարի նրանց «հաղթարշավին»: Կարծում եմ՝ իրենք էլ այդ մասին քաջ գիտեն, պարզապես այս եղանակով ջանում են աղտոտվել իրենց անձեռնմխելիությունը:

Այսօր նախկին վարչակարգը հոխորտում է, որովհետեւ դեռեւս տիրապետում է քարոզչական լծակների, պետական բարձր պաշտոնների, որոնց տերերը, բացահայտ թե գաղտնի, գործում են ներկայիս իշխանության դեմ: Անհրաժեշտ է կառավարությունը եւ ԱԺ-ն «մաքրել» հանցավոր տարրերից. ժողովուրդը դրան է սպասում, սպասում է, որ մեղավորները կկրեն իրենց արժանի պատիժը:

Հետաքրքրական է ի դեպ, որ Բաբկեն Արարքցյանի, Հրանտ Բագրատյանի եւ նրանց մյուս ընկերների կուսակցությունները ֆինանսական ու բարոյական օգնություն են ստանում էքբերի հիմնադրամից, որը հովանավորում է սոցիալիստական ուժերին: Ինչո՞վ է պայմանավորված այդ օգնությունը, ինչո՞ւ է տրվում բոլորովին այլ գաղափարախոսության հետեւորդներին՝ անհասկանալի է:

Սրանով առայժմ եզրափակենք. եթե վերը հիշատակված, ինչպես նաեւ չհիշատակված քաղաքական գործիչները ցանկություն ունեն վերադարձնելու հին լծակները, պիտի հիշեն՝ ժողովուրդն այլեւս չի ծափահարելու նրանց «հաղթարշավը», որովհետեւ ոչ որ եւ ոչինչ չի մոռացվել...

Գրի առավ
ԱՌՈՒՐ ԲԱԲԱՅԱՆԸ

Ժողովրդի հիշողությունը դեռ թարմ է, եւ այլեւս չի ծափահարի ՀՀՇ-ին

Աջ ուժերի միության ստեղծումն անակնկալ չէր, քանի որ այդ ուժերն առանց այդ էլ միասին էին. մնում էր միայն պաշտոնապես վավերացնել սույն փաստը: Այդպես էլ եղավ. ՀՀՇ-ի դուստր-կուսակցությունները՝ «21-դ դար», «Արմաս», ԼԴԿ, «Ազատություն», միավորվեցին աջ գաղափարախոսության դրոշի ներքո՝ ամենայն «լրջությամբ» պատրաստվելով զբաղեցնել երկրի քաղաքական դաշտում ըստ էության բացակայող ընդդիմադիր ուժերի թափուր տեղը: Հարցն այն է, թե ի՞նչ նպատակով: Այս կապակցությամբ ասելիք ունի «Գթություն» բարեգործական միության նախագահ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Խաչիկ Ստամբոլցյանը:

այդքան լավ, նրանց հռչակագիրը կարդալով կարելի էր մտածել, թե վերջապես հայտնվել է արդարացի պահանջներ առաջադրող ու երկրի ճակատագրով մտահոգված մի կառույց: Սակայն իզուր են հույս տածում, թե ժողովրդի հիշողությունը կարճ է. բոլորն էլ հրաշալի ճանաչում են Գերագույն խորհրդի երբեմնի նախագահ Բաբկեն Արարքցյանին, տխրահռչակ վարչապետ Հրանտ Բագրատյանին, բազմակուսակցական անձ Վիգեն Խաչատրյանին, նախկին նախագահի նախկին խորհրդական Դավիթ Շահնազարյանին... Մարդիկ, ովքեր նախորդ վարչակարգի օրոք տնօրինել են իշխանական լծակները, սակայն... Եվ սակայն ի՞նչ են արել, ի՞նչ հետք թողեցին իրենցից հետո:

Այսօր ննջադատում են Սահմանադրությունը, որը չափից դուրս մեծ լիազորություններ է տալիս երկրի նախագահին: Ես հարց եմ ուղղում պրն Արարքցյանին. իսկ ո՞ւմ ջանքերով է ստեղծվել եւ ո՞ւմ կեղծիքների միջոցով է ընդունվել Լեւոն Տեր-Պետրոսյանի համար «ձեւված» այդ Սահմանադրությունը, որ բացարձակ իշխանություն էր ապահովում նրան: Այն ժամանակ, սացվում է, Սահմանադրությունն անթերի էր, իսկ հիմա, երբ այլեւս իրենք չեն տնօրինում լծակները, սխա՞լ է: Նույն Բաբկեն Արարքցյանը պատասխանատուներից է 90-ականների էներգետիկ ճգնաժամի, նավթային մաֆիայի «կարկառուն» դեմքերից: Կամ՝ սեփականաշնորհման գլխավոր պատասխանատու Հրանտ Բագրատյանն այսօր հանկարծ դարձել է ընդդիմադիր ուժ եւ ննջադատում է տնտեսության անմխիթար վիճակը, որին ինքն է նպաստել: Կոնյակի գործարանը վաճառեց խորհրդանշական մի գնով՝ 30 մլն դոլարով, եւ հիմա, նախկին արտգործնախարար եւ գործարքին մասնակից Վահան Փափազյանի հետ պատասխանատվություն է այդ նույն գործարանում՝ առանց պատասխանատվություն իսկ զգալու արածի համար: Իսկ նրանցից քանիսի՞ գրպանները լցվեցին այդ գործարքի արդյունքում:

Կամ՝ նույն Վիգեն Խաչատրյանը, որը քաղաքական գործունեությունը սկսեց իբրեւ կոմունիստ, այնուհետեւ ճիշտ ժամանակին կողմնորոշվեց, թե ում կողմն է ուժը, եւ անցավ ՀՀՇ-ի շարքերը, հետո, նախկին նախագահի հրահանգի համաձայն, պառակտիչ նպատակներով «տեղափոխվեց» ՀՌԱԿ, եւ փորձեցին համատեղ ջանքերով ճեղքել այդ կուսակցությունը: Այնուհետեւ հերթական անգամ առանձնացավ ու ստեղծեց մի նոր կուսակցություն... Իսկ այսօր վերսին իր հարազատ ՀՀՇ-ի հետ է:

Կամ՝ հիշենք այն ժամանակ ազգային անվտանգության վարչությունը ղեկավարող Դավիթ Շահնազարյանին, որը Համբարձում Գալուստյանի սպանությունից անմիջապես հետո խորհրդարանում հայտարարեց, թե մեկ ամսում կբացահայտի այդ գործը: Իսկ Բաբկեն Արարքցյանը խոստացավ, որ չբացահայտվելու դեպքում ինքը հրաժարական

կտա. ամիսներ անցան, սակայն ոչ գործը բացահայտվեց, ոչ էլ հրաժարականը եղավ: Եվ «Ղարաբաղ» կոմիտեն այնքան «ազնիվ» էր, որ երեսպաշտություն չարեց ու չեկավ Համբարձում Գալուստյանի թաղմանը...

Այս վարչակարգին ենք «պարտական» աղետ ու թշվառ այն վիճակով, որում հայտնվեց ժողովուրդը. հիշենք բանկային ավանդների կազմակերպված թալանը պետական պաշտոնյաների կողմից, հիշենք դրամափոխությունը, երբ մարդկանց խնայողությունները մի գիշերում գրպանվեցին նախկին նախագահի, Բաբկեն Արարքցյանի, Բագրատ Ասատրյանի, Հուսիկ Լազարյանի աճպարար ձեռքով: Հիշենք, թե նույն Արարքցյանն ինչպես օժանդակեց պետական հանցագործ Եսայի Տեր-Ստեփանյանի փախուստին հայրենիքից. չէ՞ որ Եսային պիտի երկրից անվտանգ դուրս հաներ նաեւ աղետի գոտուն հասցեագրված օգնությունից իր գրպանած 3 մլն դոլարը: Ո՞րը թվարկես: Կրթական համակարգը որակապես ոչնչացվեց. մշակույթը հայտնվեց ճահճացման վիճակում, արդյունաբերությունը կանգ առավ... Եվ այս ավերածություններն այնքան հիմնավոր էին, որ մինչ այսօր ուշքի չենք գալիս:

Ժողովրդի համար ի սկզբանե անհուսալի այս մարդիկ այսօր զուրկ են զանգվածների աջակցությունից. նրանց թիկունքում մարդկային թվականակ չկա: Եթե նրանք ժողովրդի մասին մտածեին, իրենց իշխանության օրոք կմտածեին, հիմա այդ մասին խոսելն էլ ավելորդ է: Այսօր ժողովուրդն ապրում է իրենց ընդունած հանցավոր օրենքներով եւ իրենց միտումնավոր սխալ Սահմանադրությամբ: Եթե նորից գան իշխանության, ինչ է, պիտի ուղղե՞ն այդ ամենը: Մարդ չգիտի՝ խնդա՞, թե՞ լա:

«...Եվ ի՞նչ են ուզում...»

Վանո Սիրադեղյանի, Արմեն Տեր-Սահակյանի ու մյուսների դատավարություններն արդեն որոշակի առաջընթաց էին՝ անուններ հրապարակելու առումով. արդեն իսկ հնչել են Դավիթ Շահնազարյանի, Հուսիկ Լազարյանի, Սամվել Գեւորգյանի, այլոց անունները: Բացահայտված է, որ քաղաքական մի շարք սպանություններն ինքնագլուխ չեն կատարվել, այլ ունեցել են պատվիրատու եւ կազմակերպիչ: Եվ այդ սպանությունների ծանրությունն, անշուշտ, միայն Սիրադեղյանի խղճին չէ. պարզից էլ պարզ է, որ գործել է կազմակերպված մի հանցախումբ: Սիրադեղյանի վերջին անհետացումն այս ակնարկների հետեւանքն էր. նրա հետ հանցավորության անխախտելի շղթայով կապված իր ՀՀՇ-ական ընկերներն օգնեցին, որպեսզի անհետանա, այլապես դատարանում հնչելու էին իրենց բոլորի անունները:

Քրեական պատասխանատվության եւ անխուսափելի դատարանի առջեւ կանգնելու վախն է, որ այսօր այդ անձանց մղում է միավորվելու ընդհանուր դաշինքում: Շուտով նրանց կմիանան համակիր եւս մի քանի կուսակցություն ու կազմակերպություն, որոնք նրանցից ետ չեն մնում իրենց սեւ գործերով:

Իսկ ինչո՞ւ դաշինքում անմիջապես չմիավորվեցին ՀՀՇ-ն, «Շամիրամը», «Ժողովրդավարական Հայաստանը» եւ մյուսները: Որովհետեւ մեկ փուլով այդ գործողությունն աննկատ կանցներ եւ թողած տպավորությունը թույլ կլիներ, մինչդեռ այսպես ասպիճանաբար միավորվելով տպավորություն են ստեղծում, թե իրոք մի նոր ու լուրջ քաղաքական ուժ է գոյանում, եւ այն հետզհետե համալրվում է: Սա նրանց հերթական հաշվարկն է, ուր, ինչպես միշտ, միայն իրենց շահերն են հաշվի առել. սակայն այս անգամ ժողովուրդն արդեն չի ծափահարի նրանց «հաղթարշավին»: Կարծում եմ՝ իրենք էլ այդ մասին քաջ գիտեն, պարզապես այս եղանակով ջանում են աղտոտվել իրենց անձեռնմխելիությունը:

Այսօր նախկին վարչակարգը հոխորտում է, որովհետեւ դեռեւս տիրապետում է քարոզչական լծակների, պետական բարձր պաշտոնների, որոնց տերերը, բացահայտ թե գաղտնի, գործում են ներկայիս իշխանության դեմ: Անհրաժեշտ է կառավարությունը եւ ԱԺ-ն «մաքրել» հանցավոր տարրերից. ժողովուրդը դրան է սպասում, սպասում է, որ մեղավորները կկրեն իրենց արժանի պատիժը:

Հետաքրքրական է ի դեպ, որ Բաբկեն Արարքցյանի, Հրանտ Բագրատյանի եւ նրանց մյուս ընկերների կուսակցությունները ֆինանսական ու բարոյական օգնություն են ստանում էքբերի հիմնադրամից, որը հովանավորում է սոցիալիստական ուժերին: Ինչո՞վ է պայմանավորված այդ օգնությունը, ինչո՞ւ է տրվում բոլորովին այլ գաղափարախոսության հետեւորդներին՝ անհասկանալի է:

Սրանով առայժմ եզրափակենք. եթե վերը հիշատակված, ինչպես նաեւ չհիշատակված քաղաքական գործիչները ցանկություն ունեն վերադարձնելու հին լծակները, պիտի հիշեն՝ ժողովուրդն այլեւս չի ծափահարելու նրանց «հաղթարշավը», որովհետեւ ոչ որ եւ ոչինչ չի մոռացվել...

Գրի առավ
ԱՌՈՒՐ ԲԱԲԱՅԱՆԸ

ԱՆՏԻՄԻՏԻՆԳ

Միտինգավորներ ողջ երկրի, միացե՛ք

Սկզբից Հայկոմկուսը միտինգ հավաքեց, հետո՝ ՀՀՇ-ն: Այսօր կրկին Կոմկուսը կհավաքի, ուրբաթ օրը՝ ՀՀՇ-ն: Եվ այսպես, իրար փոխարինելով, սրանք, երեւի թե կզբաղեցնեն Ազատության հրապարակը մինչեւ միտինգային սեզոնի վերջը:

Ասում են, չէ՞, ամեն նորը լավ մոռացված հինն է: Մեր միտինգային անցյալն էլ, արի ու տես, վերադառնում է, միայն մի տարբերությամբ, եթե տարիներ առաջ ՀՀՇ-ի առաջնորդները զանգվածներից չէին տարբերվում բարքով ու վարքով, ապա այսօր մայիսյան արեւի տակ կանգնում են «պապլավոկների» մեղմ զեփյուռը վայելող կուշտ ու կերած մարդիկ:

Մնացած մասով Ազատության հրապարակը պաշարող ազգիս «առաջնորդները» միմյանցից կարծես թե չեն տարբերվում: Թե՛ «աջերի», թե՛ «ձախերի» միտինգային բառապաշարը նույնն է՝ ժողովրդավարություն, ազնվություն, ազգային նվիրվածություն, հայրենասիրություն եւ այլն:

Զարմանալիորեն միատարր է եւ միտինգային «էլեկտրաստը»՝ տարեց պրոլետարներ են: Շար լեզուները վերջինիս զուգադիպության պատճառը վերագրում են նրան, որ ՀՀՇ-ի միտինգի մասնայականությունն ապահովողը Պետրոս Մաթեյանն է: Ըստ չճշտված լուրերի, սույն գործիչը փորձել է Գյումրիում «Իկարուսներ» հայրաբել ազգականներին ու համագյուղացիներին երեւան հասցնելու նպատակով: Երեւի թե փնտրտուքը մասամբ է հաջողվել, քանի որ, ինչպես հայտնի է, Ռուսաստան-Բելառուս միությանը համակրող Կոմկուսի միտինգն ավելի մարդաշատ էր: Ճաշ է Մաթեյանի գործը, շատ ավելի կծանրանա, եթե ՀՀՇ-ն որոշի հիմնովին վերադառնալ իր սիրած միտինգային գործելակերպին:

Չես նախանձի եւ Հայկոմկուսին: Ի՞նչ հարց են առաջ քաշելու միտինգավորների առջեւ: Ռուսաստան-Բելառուս միության մասին Կասյանովի հայտարարությունից հետո կարծես թե խոսելն անիմաստ է, նախագահին ու կառավարությանը ննջադատելն էլ տեղին չէ՝ մի պորտֆել էլ Հայկոմկուսն է վերցրել... Թանկ հաճույք վայելելը՝ միտինգ հրավիրելը, ասկետ Կոմկուսի համար չէ. բայց, ինչպես երեւում է, գումարներ կան, այնպես որ խոսելու թեմա էլ կգտնվի:

Ինչ վերաբերում է բուն միտինգներին... «Աջ» ուժերը պետք է ուրախությամբ փաստեն, որ ՀՀՇ-ական կուսխմբակները համալրեց եւ բուն ՀՀՇ-ն, այսինքն՝ ՀՀՇ կուսակցությունը: Վանոյին փախցրեցին, Արզումանյան Ալիկին տեղը դրեցին ու դրանով մի մութ էջ էլ փակեցին: Չէ՞ որ Վանոյի ժամանակ ՀՀՇ կուսակցությունը հեռու էր պահվում մի նպատակով՝ որ չաղտոտվի առանց այն էլ աղտոտված «աջ» ուժերի միաբանությունը: Հիմա կարծես թե շունչերը բացվեցին, լեզուներն էլ երկարեցին: Կխոսեն, կհռչակեն պայծառ մտքեր ազնվության, օրինապաշտության, ժողովրդին ու հայրենիքին անբասիր նվիրվելու մասին... Ժողովրդի հիշողության վրա ցեխոտ կրկնակոշիկներով կքայլեն այնքան ժամանակ, մինչեւ հիշողությունը փոշիանա...

Այդ ժամանակ էլ բեմահարթակ կբարձրանան ազգի գլխավոր փրկիչներից Արա Սահակյանը, Տեր Հուսիկ Լազարյանը, Բաբկեն Արարքցյանը եւ, իհարկե, պարոն Լեւոն Տեր-Պետրոսյանը... Այսինքն՝ Հայկոմկուսն ամբոխին կարթնացնի, «աջ» ուժերը կմղեն պայքարի, ու կգա ողջ երկրի միտինգավորների միավորվելու երանելի ժամանակը:

ԱԲՍԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Դաշինքներին միանալու կոչերի փոխարեն պետք է գործով զբաղվել

«Ռուսաստան-Բելառուս-Հայաստան դաշինքի օգտին հանրաքվե, հանրահավաք անցկացնելը Հայաստանին իր բնական դաշնակից Ռուսաստանին արհեստականորեն հակադրելու դավադիր փորձ է», ասված է «Ազատ Հայք առաքելություն» հասարակական-քաղաքական կազմակերպության ուղերձում՝ «Ռուսաստան-Բելառուս» միությանը Հայաստանի անդամագրվելու համար կոմունիստների կազմակերպած այսօրվա հերթական հանրաքվեի առիթով:

Ուղերձում նշված է, թե իշխող վարչախմբից դժգոհ, տնտեսական, քաղաքական շրջադարձի հետեւանքով ժամանակավոր հիասթափություն ապրող մեր հայրենակիցներին որոշ ուժեր փրկության ինչ-որ դեղահաբեր են հրամցնում, ինչպես միանգամայն անընդունելի միտքը, թե Հայաստանի ու հայության փրկությունը Ռուսաստան-Բելառուս դաշինքին միանալու մեջ է:

Դաշինքներին միանալու կոչերի փոխարեն «Ազատ Հայք առաքելությունը» նպատակահարմար է համարում դիմել այդ դաշինքներին՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու պահանջով:

Ինչպես նաեւ կոչ է անում մեր երկրի պետական, քաղաքական, հասարակական, տնտեսական, մշակութային կառույցներին՝ բոլոր ջանքերը կենտրոնացնել անկախության ամրապնդման, բանակի հզորացման, Հայաստանի եւ Արցախի տնտեսությունը վերականգնելու համար:

Իռիշկենդ... Իռիշկենդ... Իռիշկենդ

– Բարեւ, Մոխ:

– Բարեւ, Դմբլդոխ:

– Որտեղի՞ց ես գալիս, Մոխ, այս մարդն ո՞վ է:

– Ծաղկվարից ենք գալիս, Դմբլդոխ, միտինգ էր, սա էլ խորհրդարանի պատգամավոր է:

– Մոխ, բա ինչո՞ւ է կացինը թիկունքում թաքցրել:

– Սուս, Ավիս Նուրիջանյանի նվերն է:

– Լսիր, էդ ի՞նչ է ուսին նստեցրել. թռչո՞ւն է:

– Չե՞ս տեսնում, թռչուն է, խոսող թութակ:

– Մոխ, ի՞նչ է խոսում:

– Ինչ սովորեցնում են, էն էլ խոսում է, լսիր:

– Կրո, կրո, կրո, ընկերներ... ամբողջ աշխարհի աշխատավորները... մ... մ... եծ Լենին... առ...

– Մոխ, ինչ անգրագետ թռչուն է...

– Սուս, չորրորդ դասարանի կրթություն ունի... լսիր:

– Հայաստանի աշխատավորները... պետք է տաղալեն դաշնակ...

– Մոխ, կարո՞ղ է հիմա 1920 թիվն է...

– Բոլոր թութակները ժամանակի հասկացողություն չունեն:

– Կրո... շուտով 11-րդ կարմիր բանակի հետ կգան մեր բարեկամ թուրքերը... ընկեր Տրոցկին ասում է՝ նրանք լավ թուրքեր են... կրո, կրո... կեցցե ընկեր Աբարբեկովը... ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է... որդին հոր համար... պատասխանատու չէ, կրո, կրո... ես ծեր...

– Մոխ, հիմա էլ դարձավ Հրանտ Բագրատյան: Ավելի լավ է, եթե կարող է՝ թող երգի.

– Կրո... կրո...

Երկար ապրի հայր Ստալինը:
Կարմիր արեւի պես,
Թող միշտ ուրախ, վստահ լինի
Կանգնած ենք սարի պես...

Կրո, կրո, իռիշկենդ... իռիշկենդ... իռիշկենդ...

– Մոխ, գահլա տարավ, ասա թող ծայնը կտրի:

– Ով սովորեցրել է, նա էլ թող ասի...

ԵՐԼԱՅԻ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ

Լիբանանի խորհրդարանի ու նրա հայասեր նախագահ Ներիի Բերիի ցեղասպանության ճանաչման բանաձևը նոր էջ բացեց երկու եղբայր ժողովուրդների պատմության մեջ

Լիբանանի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման փաստը, որի մասին գրել էինք անցյալ ուրբաթ օրվա համարում, մեծ ոգևորությամբ դիմավորվեց թե Հայաստանում, թե սփյուռքում: Սակայն, որքան էլ սարսռահնակ, այդ փաստը քարոզչական նպատակներով օգտագործվեց ՀՅԴ Լիբանանի ներկայացուցիչներից մեկի կողմից եւ տարածվեց նաեւ Ազգային հեռուստատեսությամբ: Մոռանալով ոչ միայն կենցաղավարությունը, այլեւ սարրական դիվանագիտությունը.

եւս մեկ անգամ փորձ արվեց սեփականել հաջողությունը: Այնինչ այդ հաջողության համար տարիներ շարունակ ջանք են թափել ողջ լիբանանահայությունը, նրա բազմակուսակցական երեսփոխանական բլոկը, ինչպես նաեւ Հայաստանի պետական ներկայացուցիչները: Սակայն առաջին հերթին այդ որոշման համար պարտական ենք Լիբանանի ժողովրդին, նրա պետական ղեկավարության գիտակցված դիրքորոշմանը եւ հատկապես խորհրդարանի նախագահ Ներիի Բերիին:

Ճիշտ է, լիբանանահայությունն իր չորս կուսակցություններով, խորհրդարանական բլոկով մեծ դեր է խաղացել 1965 թ.-ից սկսած Հայոց ցեղասպանության բանաձեւի կազմավորման եւ ընդունման մեջ, Լիբանանի խորհրդարանի կողմից: Սակայն եւ պետք չէ մոռանալ լիբանանյան առաջադիմական, հայրենասիրական շարժումների ու ղեկավարների տարած երկարամյա նպաստը՝ բյուրավոր հայերի գաղթականի կարգավիճակից հարգված քաղաքացիներ դառնալու գործում: Արա եւ Թուրքիայի հովանավորների ու դաշնակիցների դեմ քաղաքական ու ռազմական արյունալի հայտնի ու գաղտնի մարտերը, որոնք ի վերջո հանգեցին նախ ցեղասպանության դատապարտման բանաձեւի, ապա եւ պաշտոնապես օսմանյան պետության կողմից այդ ահավոր ոճրագործության՝ պատմական իրականության ճանաչման գործում: Պետք է պատմության համար հիշատակել, որ նշանավոր հայասերներ Մուսա Պրենսի, Քամալ Ջոմբլաթի, Ֆարաջալա Հելուի, Սաիդ Ամլի, դոկտ. Սելիմ ալ Հոսի, նախագահ Էմիլ Լահուդի գլխավորությամբ Լահուդի ընտանիքի ավելի քան 35-ամյա շնորհակալ աշխատանքները հաջողությամբ պսակվեցին հայ ժողովրդի մեծ բարեկամ, Լիբանանի խորհրդարանի նախագահ Ներիի Բերիի անմոռանալի վճռական քայլերով:

Լիբանանցի ժողովուրդն ինքը եւս զոհ է դարձել համիդյան բռնատիրության, իթթիհատական բորենիների արյունարբու քաղաքականության, ախտորի, ծրագրված սովամահության: 1915-17 թթ., երբ Արաբական թերակղզում պայթեց արաբական մեծ հեղափոխությունը՝ գլխավորությամբ Շերիֆ Հուսեյնի, ընդդեմ Թուրանի բռնակալության, ապա եւ Բեյրութում, Ալեյում, Դամասկոսում կախաղան բարձրացվեցին Լիբանանի ու արաբ ժողովրդի ականավոր դեմքեր, որոնք անգնահատելի դեր էին խաղացել Եղեռնից մազապուրծ հայ խլյակների փրկության գործում: Նրանք ամբաստանվեցին «ազգայնականության», «անկախ արաբական պետության ստեղծման», օսմանյան պետության դեմ ընբոստության դրոշ բարձրացնելու «մեղքով» եւ նահատակությամբ սրբագործեցին իրենց պատերի երազը՝ ազատագրվելու 400-ամյա օսմանյան լծից: Այդ ճանապարհին, 1901 թ.-ին, Կահիրեում սուլթան Համիդի գործակալների կողմից թունավորվեց «Բռնատիրության հիմունքներ» գլուխգործոցի հեղինակ, արաբ հեղափոխական գործիչ Աբդ ալ Ռահման Կավակեբին: Լիբանանի ու Սիրիայի օսմանյան կառավարիչ, դեպի Դեր Զորի դժոխքը հայոց տարագրության գլխավոր կազմակերպիչ Ջեմալ փաշան ճանաչված է որպես «արյունարբու», լիբանանցի ու արաբ պայծառ դեմքերի ու գործիչների դեմ իր կատարած սպանդների, ախտորների, ծերբակալությունների համար: 60-ական թթ. վերջին եր, որ լիբանանյան կինոյի ու հեռուստատեսության մի շարք հայ ու արաբ «աստղերի» մասնակցությամբ պատրաստվեց «Սեպտեմբերիկ» («Տարագրություն») ֆիլմը, որը բողոքի մեծ ալիք բարձրացրեց Թուրքիայի դիվանագիտական ու պետական շրջանակներում: Ֆիլմը նկարահանվել էր նշանավոր ռեժիսոր Բարաթի գլխավորությամբ, թուրք սպայի դերը ստանձնել էր Պերճ Ֆազլյանը, իսկ գլխավոր հերոսուհին «Լիբանանի սոխակ» Ֆայրուզն էր: Նույնպիսի «փոթորիկ» բարձրացվեց նաեւ սիրիացի ռեժիսոր Անզորի նկարահանած հեռուստատեսային սերիալը՝ «Հողի եղբայրները», որտեղ Հայոց ցեղասպանության մասին ամբողջ արարներ էին ցուցադրվում...

1997 թ., երբ առաջին անգամ հայոց անկախ հողի վրա վայրէջք կատարեց Լիբանանի խորհրդարանի նախագահ Ներիի Բերիին տեղափոխող ինքնաթիռը, նրան ջերմորեն ընդունեցին Հայաստանի քաղաքական, կրոնական, մշակութային գործիչները, իսկ այցելությունը լայնորեն լուսաբանվեց հայկական զանգվածային լրատվության միջոցներով: Ներիի Բերին եղավ նաեւ Հայոց ցեղասպանության թանգարանում ու տնօրեն Լավրենտի Բարսեղյանի, պատվիրակության անդամների հետ զննեց ցուցադրված փաստաթղթերը, լուսանկարները, մատնանշումներն ու նահատակների ոսկորները: Լիբանանի շիա համայնքի եւ նահատակ կրոնական ղեկավար իմամ Մուսա Սադրի անհետացումից հետո «Ամալ» շարժման ղեկն ստանձնած Ներիի Բերին եղավ նաեւ Սուրբ Էջմիածնում՝ հանդիպելով երջանկահիշատակ Գարեգին Ա կաթողիկոսի հետ: Իսկ այցելության ավարտին կառավարական ընդունելությունների տանը տրված մամլո ասուլիսի ընթացքում փոխանցած զգայացունց հայտարարությունը՝ ՍԱԿ-ի հանրամեի հովանավորության տակ ԼՂ Հանրապետության ճանաչման մասին, մինչեւ այսօր էլ սուր բանավեճեր է հարուցում տարբեր շրջանակներում:

Լիբանանի խորհրդարանի նախագահն առաջիններից էր Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի ու նրա պատվիրակությանն ընդունողների մեջ, որպես հարազատ եղբոր, այս տարվա փետրվարին: Իսկ իր պալատում տրված փառատոնի ճաշկերույթում նա հրավիրել էր շուրջ 300 լիբանանցի ականավոր դեմքերի ու քաղաքական անձերի՝ ամեն կրոնից ու դավանանքից: Ներիի Բերին նույնպիսի ջերմությամբ ընդունել էր նաեւ Հայաստանի Ազգային ժողովի երբեմնի խոսնակ Բաբկեն Արարքցյանին, որպես բարեկամ ու դաշնակից երկրի պետական ներկայացուցչի: Մի խոսքով, լինելով 1915, ապա եւ 1938 թթ.-ից լիբանանցի հայասեր քաղաքական գործիչների արժանավոր ժառանգորդ, Լիբանանի խորհրդարանի նախագահը շատ լավ գիտակցում է, որ այս պատմական դժվարին ժամանակաշրջանում Թուրքիա-Իսրայել-ՆԱՏՕ ռազմագիտական առանցքը կարող է միայն հավասարակշռվել Լիբանանի ու արաբական աշխարհի համագործակցությամբ՝ Հայաստանի ու նրա մեծ դաշնակից Ռուսաստանի հետ: Այդպիսի համագործակցության փայլուն օրինակ էր Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունումը պատշաճաբար երկրի խորհրդարանի կողմից: Այնպես որ, Լիբանանի քաղաքացիական պատերազմից, Հարավային Լիբանանի հողերի ազատագրության պայքարով վերածնված Լիբանանը մնում է որպես սփյուռքահայության ծաղկուն ոստաններից մեկը: Այս պատմական ակտն առաջինն արաբական աշխարհում նոր էջ բացեց երկու եղբայր ժողովուրդների պատմության մեջ:

ՀԱՄՈ ՄՈՍԿՈՓՅԱՆ

Ներիի Բերին եւ Ռոբերտ Քոչարյանը Լիբանանի խորհրդարան մտնելիս

Լիբանանի նախագահ Էմիլ Լահուդը եւ խորհրդարանի նախագահ Ներիի Բերին

Ադրբեջանն այս շաբաթ անհանգիստ կլինի

Ակնհայտորեն, այս շաբաթ Ադրբեջանի քաղաքական ընդդիմությունն ու ընդդիմադիր մամուլն աղմկելու, նախագահ Ալիեւի դարաբաղյան քաղաքականությունը քննադատելու առիթներ կունենան:

Լեռնային Դարաբաղի չլուծված խնդիրը հրաբալի խաղաքարտ է Ադրբեջանի քաղաքական ուժերի համար, այնքան զորեղ խաղաքարտ, որն օգտագործելով հնարավոր է հեղաշրջում կատարել, վարչակազմին մեղադրել երկրի շահերը ոտնահարելու մեջ: Եթե համեմատելու լինենք նախկին նախագահ Էլչիբեյին, որը փափագում էր ոտքերը լվանալ Սեւանա լճի ջրերում, Ալիեւին, որ պատրաստ է փոխզիջումների, հրաժարվել ԼՂ-ն ուղղակիորեն Բաքվին ենթարկելու մտադրություններից, ապա, անկասկած Ալիեւի քաղաքականությունը պարտվողական է:

Ադրբեջանի ընդդիմությունը լուրջ կասկածանքով եւ խորը մտահոգությամբ արձագանքեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Քերի Քեւինոուի Բաքու կատարած անսպասելի այցելությանը: Նախորեին պրն Քեւինոուն Երեւանում էր, ընդունել էր արտգործնախարար Օսկանյանին, նախագահ Քոչարյանին: Պաշտոնական լրատվությունը չափազանց ժլատ էր, զրուցակիցներն անդրադարձել են Հայաստանի ներքաղաքական կացությանը, քննարկել ԼՂ խնդրի կարգավորման հետ կապված հարցեր:

Նախագահ Ալիեւի հետ հանդիպման ընթացքում պրն Քեւինոուն անդրադարձել է «օկուպացված տարածքներ» վերի ազատագրումից հետո դրանց վերականգնման ծրագրերին», «երկանգնման ծրագրերին, բնակաթգծերի, էլեկտրակայանների, բնակելի տների եւ այլ շինությունների վերականգնմանը», Ալիեւի ծննդյան օրվա կապակցությամբ հանձնել խորհրդանշական նվեր՝ Ադդամ քաղաքի ավերված մզկիթի մի քար: «Ադդամ ալ Ալիեւը չի հարցրել, թե ինչու է Քեւինոուն իրեն հանձնում ոչ թե Շուշիի, այլ Ադդամի մզկիթի քարը: Քեւինոուի հանձնած քարը նշանակում է այն խորհրդանշական սահմա՞նը, որից այն կողմ Ադրբեջանը չպետք է հավակնի», կասկածանքով հարցնում են Բաքվի դիտորդները:

Մայիսի 17-ին ժնեւում տեղի կունենա ԵԱՀԿ ՄԽ համանախագահների հանդիպումը, որից հետո, ամենայն հավանականությամբ, հակամարտող կողմերին կարվեն նոր առաջարկություններ: Ինչպիսին կլինեն նոր առաջարկությունները՝ դժվար է ասել: Համանախագահների վերջին՝ «Ընդհանուր պետություն» բանաձեւն ընդունվել է Երեւանի եւ Ստեփանակերտի կողմից, Բաքուն մերժել էր: Դժվար չէ կռահել, որ հայկական կողմը սպիտված կլինի փոխզիջումների գնալ, ասել է թե՝ մեզ կառաջարկվի մի տարբերակ, որն «Ընդհանուր պետություն» կոչվածից հասատ լավը չի լինի: Նրանք, ովքեր գեթ մեկ անգամ հնարավորություն են ունեցել աչքի անցկացնել խիստ գաղտնի պահվող այս փաստաթուղթը, կարող են վստահել, որ այն անընդունելի է Հայաստանի եւ ԼՂՀ-ի համար. ԼՂՀ-ն դեռ ֆակտո անկախ կարգավիճակով մնալու է Ադրբեջանի կազմում (Ալիեւի ծեւակերպումով՝ «ինքնավարությունից վեր, անկախությունից վար»), Ադրբեջանին թե են վերադարձվելու հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող շրջանները, բացառությամբ Լաչինի միջանցքի, որ պետք է տեղաբաշխվեն խաղաղարար ուժեր: Եթե «Ընդհանուր պետություն» բանաձեւումը կամ փոքր-ինչ ձեւափոխությամբ ներկայացվելիք նոր տարբերակն անընդունելի է Ադրբեջանի համար, ապա չի կարելի ենթադրել, թե ընդունելի է Հայաստանի եւ ԼՂՀ-ի համար: Ո՞վ կարող է բացառել, որ Ադրբեջանն ավելիին է ձգտում՝ այն տարբերակին, ինչն առկա էր խորհրդային տարիներին՝ ինքնավարություն: Սակայն սա այն բառն է, որը կարող է թեժացնել Հայաստանի առանց այն էլ լարված ներքաղաքական իրավիճակը: Հիշո՞ւմ եք 1997 թ. վերջերին այս բառը Լեւոն Տեր-Պետրոսյանը փորձում էր բարձրաձայն արտաբերել: Բավական էր մի քանի ամիս, եւ «հայտնի ուժերը» գահընկեց արեցին մեր նախկին նախագահին:

Մայիսի 18-ին Վաշինգտոնի ամերիկյան համալսարանի իրավաբանական ֆակուլտետում կկայանա «ԼՂ հակամարտություն. կարգավորման ժամանակը» թեմայով միջազգային գիտաժողով, ուր ելույթներով հանդես կգան ԵԱՀԿ ՄԽ Ամերիկայի նախկին համանախագահ Դոնալդ Կայզերը, ներկա համանախագահ Քեւինոուն, հայտնի դիվանագետներ Ռոզենբլատն ու Ջերեջյանը, Լաչինը Մեղրիով փոխանակման ջատագով Պոլ Գոբլը, ՀՀ արտգործնախարար Օսկանյանը, ԱՀ արտգործնախարար Գուլիեւը, ԼՂՀ արտգործնախարար Մելքումյանը եւ այլք: Գիտաժողովում շեշտը կդրվի ԼՂ հարցի լուծման իրավական կողմին, սակայն Ադրբեջանի ընդդիմությունը ինչ-ինչ ենթադրություններ կանի եւ Աբուլֆազ Էլչիբեյի ու Էթիբար Մամեդովի առաջնորդությամբ դուրս կգա Բաքվի փողոցներ: Չի բացառվում, որ մայիսի 18-ին եւ 19-ին Բաքուն հանդարտ լինի: Մայիսի 20-ին, սակայն, հանդարտ լինել չի կարող: Հենց այս օրը տեղի կունենա նախապես նշանակված բազմահազարանոց ցույցը: Մայրաքաղաքի փողոցներ դուրս կգան Ադրբեջանի ընդդիմության շուրջ երկու տասնյակ կուսակցական առաջնորդներ ու հազարավոր համակիրներ: Ցուցարարների նշանաբանները նմանատիպ նախորդ ցույցից չեն տարբերվի. «Ալիեւն իշխանությանն է եկել կեղծիքներով», «Ալիեւն ածուրդի է հանել ադրբեջանական Դարաբաղը», «Իշխանությունները կոռումպացված են», «Ադրբեջանի դրոշը պիտի ծածանվի Դարաբաղի, Շուշիի, Թավրիզի եւ մնացած կորսված հողերի վրա...»:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Մշակույթ

Գործը մնաց հիշատակող...

Անդրանիկ Հարությունյան գրողն ու քաղաքացին

«...Բերդածորցին ուրիշ է: Միշտ այլերիս առաջ է փոքրամարմին ու ինքնունն անց Վարսիկ տատը: Նա Բերդածորի խորհրդանիշն է ինձ համար, նա է, որ համբուրում է այլերս, մայրական չորացած մատներով այստեղ արդեն սպիտակած մազերս: Բերդածորն ինձ համար Առնոն է՝ Դալամա Սահակի բոցը, մարդ, որը Բերդածորից Ստեփանակերտ հասնելու համար կարող է ամիսներ սպասել, ուրիշների համար վտանգել սեփական կյանքը: Բերդածորը Սլավիկն է ինձ համար, Ոսկանաց եղիշի բոցը, առանց որի իմ մեջ մի հատիկ օրը դատարկվում ու դառնում է անիմաստ, նա է, որ դպրոցում առաջինը սկսեց դասավանդել ցեղակրոն, չնայած դրա կարիքը, թերեւս, ամենաիչը մեր երեխաներն են զգում: Բերդածորը...»:

Այս տողերը պատկանում են Անդրանիկ Հարությունյանի գրչին, նա, ով «Գրական թերթի» 1990 թ. հունիսի 15-ին տպագրված «Բերդածոր» ակնարկը ստորագրել է որպես Բերդածորի ինքնապաշտպանության խորհրդի նախագահ, նա, ով դեռ 1990-ին մարգարեանում է՝ ասելով. «Բերդածորը ճակատագիր է, եթե ոչ ես, ապա իմ Վահագն որդին պիտի տեսնի, թե ինչպես է բացվում լաչինյան ճեղքը, եւ Հայաստանը մեկընդմիշտ իր գիրկն է առնում Արցախը: Ես հավատում եմ դրան»:

Ու հետո, 1992 թ. օգոստոսի 28-ից հետո արդեն Վահագն Դավթյանը պետք է գրեր. «Հազար մահի միջով էր անցել, բայց կույր պատահականության զոհը դարձավ: Շատ չեղա՞վ, Տե՛ր... Ցավում, խիստ է ցավում սիրտս...»: Բանաստեղծը վտիտ ու բարակ երեսնամյա երիտասարդին, որը տառապյալ Հիտլերի տեսք ուներ, լույսի սյուն է կոչում:

1992 թ. հունիսի 1-ին մարտական դիրքերում, Անդրանիկի ընկեր Արտակ Արզումանյանը (հեռուստալրագրող, որը ծննդատեղի ու անխտրական ներկայացնում էր ժամանակի իրադարձությունները եւ որը նույնպես զոհվեց նույն տարվա օգոստոսի 28-ին, Անդրանիկի հետ) համոզված ասում է. «Ես քո աչքերի մեջ Վանա ծովն եմ տեսնում: Դու մինչեւ Վանա ծովը չտեսնես՝ չես մեռնի: Դու քո տառապած աչքերը լվանալու ես Վանա ծովի ջրերով»: Ի՞նչ իմանար Արտակը, թե ճակատագիրն իր ու Անդրանիկի համար ինչպիսի դաժան անակնկալ էր պատրաստել. օգոստոսի 28: Ու այս օգոստոսի 28-ին վքարվող մի մեքենա, որի մեջ եղած մարդկանցից երկուսը՝ Անդրանիկ Հարությունյանը եւ Արտակ Արզումանյանը պետք է ավարտին իրենց երկրավոր կյանքը...

Ահա, գրեցի այս խոսքերը եւ զգացի, որ մի փիչ ճոճռան են, մի փիչ վերամբարձ: Նայեցի Անդրանիկ Հարությունյանի որդու՝ Վահագնի աչքերին, տեսա Անդրանիկի դաստը (իսկը հոր պատճենը)՝ Անժելայի սքանչելի հայացքը, Անդրանիկի կնոջ՝ տիկին Աստղիկի անարցունք ցավը զգացի ու ոչ մի կերպ չկարողացա հասկանալ, թե աշխարհն ինչո՞ւ է այսպես խառնափնթոր հունցված, ինչո՞ւ պիտի լույսի սյունը տառապյալ Հիտլերի կերպարանք ունենա, ինչո՞ւ... ինչո՞ւ... Հազար ու մի ինչո՞ւ...

Ասում են, թե ԱՄՆ-ում Անդրանիկ Հարությունյանի անվամբ հիմնադրամ է ստեղծվել: Ու եթե դա իրոք այդպես է, պարզապես զարմանում եմ, որ մինչեւ օրս ինչու այս հիմնադրամի պատասխանատուների մտքով չի անցել եթե ոչ գիրք հրատարակել Բերդածորի ինքնապաշտպանության խորհրդի նախագահի մասին, ապա գոնե նրա գրական գործերը տպագրել: Գրականության համը զգացողը գիտե, որ Անդրանիկ Հարությունյանը գրիչ ուներ, գրողի աչք ու նուրբ հոգի:

Իր իսկ խոսքով ասենք. «Առավոտ լուսո /Հորիզոնն ի վեր /Մի կտոր ա-ռեւ /Լույս է արարում... /Ծնվում է օրը, /Օրը շատանում է: /Մսավաճառի կացնի հարվածով /Կիսվում է օրը/, /Վազում է օրը, /Ու ժամանակի միջանցքների մեջ /Օրը սպառվում է: /Իսկ երեկոյան /Փողոց մտրոդ կինը /Հավաքում է այն /Ու իր դույլի մեջ /Խեղդամահ անում...»: Այսպիսի օրեր է ապրել Անդրանիկ Հարությունյանը, բայց միշտ էլ գիտակցել է, որ ճակատագրով դեռ ճամփորդ է, անավարտ գիրք է հինգհազարամյա ու մի բռունցք է, որ դեռ չի սեղմվել: Եկավ նաեւ սեղմված բռունցք դառնալու ժամանակը: 1988-ը: Վանի Այգեստանի պաշտպաններ Մանուկ վարժապետի (Խրիմյան Հայրիկի մտերիմներից), Տիգրան վարժապետի, Մազմանովի հետնորդն առաջինը գնաց Արցախ: Եվ առաջին գլխագինը, որ սահմանել էին ադրբեջանցիները, Անդրանիկի համար էր:

Կենաց եւ մահու կռիվ էր, գոյատեւման կռիվ: Առաջին իսկ օրերից Անդրանիկը՝ բանաստեղծը, գրողը, ժուռնալիստը, մարտական դիրքերում էր: Դաժան մարտերից հետո գրառումներ էր անում օրագրում: Դրանք զուտ օրվա տպավորություններ չեն, որոնք փաստագրական մեծ արժեք ունեն: Գրողի նկատողություններ են. «...Որքան առողջ է ազգի ինքնապաշտպանական բնազդը՝ նույնքան եւ հզոր է ու անկասելի գոյության իրավունքի գործադրումը նրա կողմից: Մի ազգ, որն իր գոյության իրավունքը փնտրում է օտար ճամփաներում՝ իրավունք չունի ոչ ազատության, ոչ երջանկության եւ ոչ էլ գոյության: Այսօր մենք՝ հայերս, դուրս ենք եկել ազգային-ազատագրական պայքարի, բայց լիովին չենք ընդունել այս ծննդատության իմաստը, չենք վերափոխել մեր մեջ մենակության սարսափը եւ շարունակում ենք մեր պայքարի տաճարը կառուցել՝ որպես հիմնապյուներ օգտագործելով այլոց կարծիքները: Քանի դեռ այս մտայնությունն է իշխողը՝ հայ ժողովուրդը չի կարող հույս ունենալ որեւէ հարցի վերջնական լուծմանը: Այո, հայ ժողովուրդն ունի հողային պահանջ եւ չի հրաժարվի իր պահանջատիրությունից: Բայց առայժմ մենք զուգահեռաբար այլ հարցեր պետք է լուծենք. նախ՝ բարոյահոգեբանական եւ ապա՝ գաղափարական: Նախ պետք է հասնել այն բանին, որ հայ ժողովուրդը հաղթահարի իր մեջ մենակության սարսափը, գիտակցի, որ ուժեղն ավելի հզոր է, երբ մնում է մենակ, հասկանա, որ մենակ մնալու գիտակցությունն է ազգին տանում ուժերի գերագույն լարման եւ կենտրոնացման»...

Այս տողերը վերցված են Անդրանիկ Հարությունյանի օրագրից, թվագրված են 1989 թ. դեկտեմբերի 31-ով, այսինքն՝ այն ժամանակով, երբ Անդրանիկը Բերդածորի ինքնապաշտպանության խորհրդի նախագահն էր: Գրողի՞ խոհեր են, ազատամարտիկի՞, ազգային գործչի՞... Որակումները թողնենք պատմությանը, քանզի շատ արժեքներ դեռեւս իրենց տեղում չեն, խախտվել են չափանիշները:

Անդրանիկ Հարությունյանի առածը բարձր է գնահատվել շատ ու շատ հեղինակավոր մարդկանց կողմից: Աշխարհահռչակ մարդասեր, մարդու իրավունքների պաշտպան Անդրեյ Սախարովի հուշամեդալն Անդրանիկին է հանձնել Սախարովի այրին՝ Ելենա Բոնները, եւ անսալով Անդրանիկի խնդրանքին, ՄԱԿ-ում օգտակար գործ կատարեց Բաքվի Բայլովյան բանտում կալանված Անդրանիկի 5 զինվորների գնդակահարությունը կանխելու համար:

1992 թ. Անդրանիկը հրավիրվեց ԱՄՆ եւ այնտեղ եղավ չորս ամիս: Սա տուրիստական այց չէր, հանգիստ չէր: Գրող մարդը, երեք տարուց ավելի մարտական դիրքերում եղած մարդը դիվանագիտական հանդիպումներ էր ունենում ամերիկյան քաղաքական գործիչների, սենատորների, կոնգրեսականների հետ: Սայրուս Վենսի, Ջորջ Բուշի, Բուդրոս Բուդրոս Ղալիի հետ զրույցների ժամանակ Անդրանիկ Հարությունյանը շատ ավելի քաղաքական, ազգային հարցեր էր քննում, այս քաղաքական այրերին բացատրում էր հայ ազգային-ազատագրական պայքարի էությունը:

...Պարզապես զարմանալ կարելի է, թե ինչպիսի հարուստ կյանքով է ապրել Անդրանիկ Հարությունյանը՝ գրողը, բանաստեղծը, ժուռնալիստը, ազատամարտիկը... Կարելի է շարունակել այս թվարկումը, կարելի է նոր ու նոր փաստեր բերել: Պարզապես թերթի ծավալները թույլ չեն տալիս: Հուսանք, որ հարմար առիթ կլինի Անդրանիկ Հարությունյանին ներկայացնել առավել ամբողջական: Առավել եւս, որ «Հայաստան» հիմնադրամի կազմում 1992-ին ԱՄՆ-ում գումարներ են հանգանակվել նաեւ «Անդրանիկ Հարությունյանի հիմնադրամի» անունով: Լոս Անջելեսի գործարար Գեւորգ Ղնդիկյանը լավ է հիշում այդ օրերը. «Ամեն ինչ ոսկեդարյան շուկայի մեր շրջանակում սկսվեց այն օրվանից, երբ Անդրանիկ Հարությունյանը կամ ինչպես սիրում ենք նրան կոչել բոլորս՝ Բերդածորի Անդոն, ոտք դրեց Լոս Անջելես: Նա մեծ առաքելությամբ էր եկել Ամերիկա, արդեն հանդիպումներ էր ունեցել քաղաքական, պետական գործիչների, ՄԱԿ-ի աշխատակիցների հետ, սակայն այն կարեւոր գործը, որ արեց համայնքի ներսում, ըստ իս, վեր էր ամեն ինչից: Անդոն շարժեց համայնքը, բոլորիս ուղեղում մեխեց Ղարաբաղ անունը եւ վերադարձավ՝ կազմակերպելու իր սիրելի Բերդածորի պաշտպանությունը»...

...Երեւանյան խաղաղ փողոցներից մեկում Անդրանիկ Հարությունյանի տունն է... Նա տանը չէ: Բայց միշտ ներկա է, որովհետեւ նրա թողած գիրն է մնացել: Մնալու է նաեւ հիշողությունը նրա մասին:

ՍԵՐԳԵՅ ՊԱՆՈՅԱՆ

Անդրանիկ Հարությունյանի հանդիպումը Բուդրոս Ղալիի հետ: ԱՄՆ. 1992 թ.

ՍԻՍՍ ՏԻԵԶԵՐՔ-2000

Աշխարհի գեղեցկուհին հնդիկ է

Գեղեցկության մրցույթները վիրավորո՞ւմ են կանանց արժանապատվությունը. այս հարցին ժխտական պատասխան է տալիս աշխարհի ամենագեղեցիկ կին ճանաչված 21-ամյա Լարա Դուտան (Հնդկաստանից): Օրերս Կիպրոսում ավարտված գեղեցկության մրցույթին, որը տեւեց երեք շաբաթ, մասնակցում էին 79 գեղեցկուհիներ: Ի վերջո հեղինակավոր ժյուրին աշխարհի թիվ մեկ գեղեցկուհի ճանաչեց մագիստրոսի աստիճանով կարի մասնագետին: Լարա Դուտային գլխավոր մրցանակը հանձնեց 1999 թվականի գեղեցկուհի Բուսվանիայի ներկայացուցիչը: Երկրորդ տեղում է Վենեսուելայի գեղեցկուհի Կլաուդիա Մորենան, իսկ երրորդում՝ իսպանուհի Էլեն Դինսը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կինոն կորցրե՞լ է շքեղությունը

Եվրոպական ֆիլմերի փառատոն Երեւանում

Կինոփառատոն հասկացությունը միշտ էլ տոնականության, շքեղության, նորության հետ է զուգորդվում: Այսպիսի ակնկալիքներ կային նաեւ եվրոպական ֆիլմերի երեւանյան փառատոնից, որը տեղի ունեցավ մայիսի 9-15-ը: Այն կազմակերպել էին Երեւանում Եվրամիության հանձնաժողովը, ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարությունը, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միությունը, Paradise ՍՊԸ-ն, Հայաստանի ազգային ֆիլմադարանը: Ցուցադրվեցին Եվրամիության անդամ երկրների՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Շվեդիայի կինոստուդիաներում վերջին տարիներին նկարահանված կինոնկարներ: Համատարած տեսաֆիլմերի, հեռուստատեսության (հատկապես Հայաստանի ազգային հեռուստատեսության) տոմս հաղորդումներից զզված, բռնություններից եւ սեխից հետո ակնկալվում էին լուրջ ստեղծագործություններ: Սակայն, ավա՜ղ, դժվար է ասել, թե որեւէ լուրջ գործ ցուցադրվեց: Անշուշտ, տեղին չէ մեղադրել փառատոնի կազմակերպիչներին: Գուցե եվրոպական կինոն իսկապես կորցրե՞լ է որակը, այսինքն ամենամաքուր, արժեք չունեցող զգացմունքն ու փա՞ստն է թագավորում այսօրվա եվրոպական կինոյում: Ամեն դեպքում գոնե չես հիանում «Կրակի նշաններ» (Պորտուգալիա), «Ծիծաղելի ոսկորներ» (Անգլիա), «Սերիական սիրեկան» (Ֆրանսիա) եւ մյուս ֆիլմերով: Ամեն դեպքում համարենք, որ եվրոպական ֆիլմերի փառատոնը կայացավ, եւ հանդիսատեսը գոնե ծանոթացավ իրական վիճակին:

ԱՐՄԻՆԵ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Փայլուն հաջողություններ

Լոս Անջելեսի Թեմեյան մշակութային միության Արտակ Տիգրանյանի անվան դպրոցը փայլուն գնահատական է ստացել «Ուասկ» հավատարմագրման այցելու կոմիտեից՝ բարձր առաջադիմության ուսանողներ պատրաստելու համար: Գնահատականի ջերմ խոսքեր են հղել նաեւ Կալիֆոռնիայի լավագույն համալսարանները:

Այս մասին է հաղորդում «Արմինյո միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի ապրիլի 15-ի համարը, որտեղ նշված է նաեւ, որ այս տարվա 22 շրջանավարտներից 4-ը ընդունվել են Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանը, մեկ ուսանող ընդունվել է Բաքլիի համալսարանը, մեկը՝ Նյու Յորքի համալսարանը, երկուսը՝ «Յուսի Էդդի» (մեկը լրիվ կենսաթոշակով) եւ մեկը՝ Դեյվիս համալսարանը: Բոլոր այլ տեղական համալսարաններ դիմողները (թվով 13 հոգի) ընդունվել են հաջողությամբ: Նման արդյունքները խոսուն վկայություններն են, որ համեմատաբար փոքր հնարավորություններով համեստ դպրոցներում հրաշալի ծեռքբերումների կարելի է հասնել նվիրյալ եւ ծեռնհաս մանկավարժների ու նաեւ ուսանողության տքնաջան ու հետեւողական աշխատանքի շնորհիվ:

Հ. Ծ.

Գյումրվա հոգին անմահ է

Ժամանակակից արվեստի թանգարանում բացվել է գյումրեցի լուսանկարիչ Հայկ Ադամյանի աշխատանքների ցուցահանդեսը: 1988-ից հետո Գյումրին աշխարհին ներկայացվել է որպես ավերումների, փլատակների, խեղված ճակատագրերի եւ ոչ մի կերպ չվերածնվող քաղաք: Հոգնել էինք անվերջ կործանումներ տեսնելուց, դրանց մասին խոսելուց: Եվ, ահա, Հայկ Ադամյանը մեզ ներկայացնում է հավերժական Գյումրին՝ իր ավանդական գեղեցկություններով, հմայքով, լուսավոր խորհուրդներով: Ցուցահանդեսի բացման ժամանակ, մայիսի 12-ին, արվեստագետն ասաց. «Իմ խնդիրը չէր ներկայացնել Գյումրին որպես աղետի գոտի: Ես դեմ եմ դրան: Ես ցանկացել եմ ցույց տալ Գյումրվա հոգին, այն, ինչով ապրել է այս քաղաքը»: Ցուցահանդեսը հովանավորել է ծագումով գյումրեցի, ՀՀ նախկին վարչապետ, այսօր մարդկային զարգացման միջազգային կենտրոնի եւ Գյումրիի զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Դարբինյանը:

ԱՆԺԵԼԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՕՐՎԱ ՏՈՂԵՐԸ

Մայիսի 16

- 1703 թ. մահացել է ֆրանսիացի գրող Շարլ Պերոն: 1697 թ. ակադեմիկոս եւ բանաստեղծ Պերոն որդու անունով հրատարակում է հեքիաթների ժողովածու: Հետաքրքրական է, որ ինքը՝ գրողը, հեքիաթ գրելն անլուրջ զբաղմունք է համարել: Բայց տարիներ անց այդ գրքերը փառք են բերել Շարլ Պերոյին:
- 1886 թ. ծնվել է ռուս բանաստեղծ Վլադիսլավ Խոդասեւիչը, որը չէր պատկանում կամ հարում այս կամ այն գրական դպրոցին եւ ուղղությանը:
- 1905 թ. ծնվել է ամերիկացի դերասան Հենրի Ֆոնդան, որը կինոարվեստ գնաց ավելի ուշ, 1935-ին: Առաջին իսկ ֆիլմից դերասանը հաջողություն ունեցավ:
- 1929 թ. ամերիկյան կինոակադեմիան առաջին անգամ «Օսկար» մրցանակ շնորհեց: «Թեւեր» ֆիլմը (ռեժիսոր՝ Ուիլմին), ինչպես նաեւ դերասաններ է. Յանինգսը եւ Դ. Հեյնորը «Օսկարի» առաջին մրցանակակիրներն են:
- Այս օրը հին հայկական տոմարով Մարերի ամսվա Մանի օրն է:

ՆԱՐԻԿ ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏ

Խաղարկվեցին օլիմպիական խաղերի ուղեգրեր

Երեւանում, «Դինամո» ընկերության մարզադահլիճում անցկացվեց ընտրական մրցաշար, որին մասնակցեցին եվրոպական 23 երկրների մարզիկ-մարզուհիներ: Այստեղ առավել հաջող հանդես եկած երկուական տղամարդ ու կին մասնակիցներ իրավունք ստացան մասնակցելու Սիդնեյի 27-րդ ամառային օլիմպիական խաղերի խոցասուսերի մրցումներին:

Մասնակիցները նախ մրցեցին խմբերում, որտեղ հաջող հանդես եկած 16-ական մարզիկներն ու մարզուհիները պայքարը շարունակեցին օլիմպիական մրցակարգով:

Ի վերջո, հաջողությունն ուղեկցեց տղամարդկանցից Ալեքսանդր Գորբաչուկին (Ուկրաինա) եւ Մարտին Ֆիշերին (Շվեյցարիա), կանանցից՝ Տամարա Սոսրասովիչին (Հարավսլավիա) եւ Յուլյա Վանսովիչային (Լատվիա): Այս քայլակը օլիմպիադայի ուղեգրեր նվաճեց:

Մրցումներում հանդես եկան նաեւ Հայաստանի ներկայացուցիչներ Սամվել Գրիգորյանն ու Օլգա Զանփոլադյանը: Երկուսն էլ հաջողությամբ անցկացրին խմբային մենամարտերը եւ մտան հաջորդ փուլ: Գրիգորյանը 1/8 եզրափակիչում հաղթեց ուժեղ Վան Լեյկեին (Բելգիա) եւ քառորդ եզրափակիչում մրցելու իրավունք ստացավ: Այստեղ նա համառ պայքարում զիջեց մրցաշարի ապագա հաղթող Ալեքսանդր Գորբաչուկին: Զանփոլադյանը եւս զիջելով ապագա հաղթողին՝ Տամարա Սոսրասովիչին, դուրս մնաց հետագա պայքարից: Ընդ որում, խմբային մրցումների ժամանակ Օլգան պարտության էր մատնել հարավսլավացի մարզուհուն:

Նախաօլիմպիական ընտրական մրցաշարը եւ մարզական, եւ կազմակերպական բարձր մակարդակ ուներ: Դա նշեցին բոլոր մասնակիցները՝ մարզիկները, մարզիչները, մրցավարները: Շատ տպավորիչ էր մրցումների բացման հանդիսավոր արարողությունը:

Այդ օրերին Երեւանում էին գտնվում նաեւ սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի նախագահ, ֆրանսիացի Ռենե Ռոխը եւ եվրոպական ֆեդերացիայի նախագահ, հունգարացի Ենե Գամուշին: Նրանք եւս բարձր կարծիք հայտնեցին մրցումների կազմակերպական մակարդակի մասին: Նրանք միաձայն նշեցին, որ Երեւանը կարող է բարձր «Ա» կարգի միջազգային մրցաշարեր անցկացնել (ավարտված մրցումները նույնպես «Ա» կարգի էին): Մրցումների օրերին գործնական հանդիպումներ, խոսակցություններ ընթացան միջազգային եւ հայաստանյան սպորտի ղեկավարների միջեւ: Մասնավորապես, Ռենե Ռոխին եւ Ենե Գամուշին ընդունեց ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի փոխնախարար Իշխան Զաքարյանը:

Ավելացնենք նաեւ, որ օլիմպիական ընտրական մրցումներին նախորդեց «Բ» կարգի միջազգային մրցաշար, որին շուրջ 40 մարզիկ-մարզուհիներ մասնակցեցին: Տղամարդկանց մրցապայքարում իր հավասարը չունեցավ երեւանցի Գագիկ Մուրադյանը: Երկրորդ տեղը գրավեց Ֆարհադ Ռեզաին (Իրան), իսկ երրորդ-չորրորդ տեղերը բաժանեցին Անդրանիկ Արազյանը (Հայաստան) եւ Ֆարզաս Ռոստամին (Իրան): Կանանց մրցաշարում հաղթեց Ֆինլանդիայի ներկայացուցիչ Նինա Բյորկմանը: Հաջորդ տեղերում են Աննա Աբրամիշվիլին, Ռուսուդան Գոգիաշվիլին (երկուսն էլ՝ Վրաստան), Լիլիթ Գրիգորյանը (Հայաստան):

Ռ. Ա.

ՀՈԿԵՅ

Չեմպիոնը Չեխիայի հավաքականն է

Ավարտվեց Սանկտ Պետերբուրգում անցկացված տափօղակով հոկեյի աշխարհի առաջնությունը:

Կիսաեզրափակիչներից մեկում չեխերը 2-1 հաշվով հաղթեցին կանադացիներին, մյուսում սլովակները 3-1 հաշվով՝ ֆիններին:

Այսպիսով, չեմպիոնի կոչման համար վճռական խաղում հանդիպեցին հարեւան երկրների՝ Չեխիայի եւ Սլովակիայի հոկեյիստները: Ավելի ուժեղ գտնվեցին չեխերը, որոնք հաղթեցին 5-3 հաշվով եւ երկրորդ անգամ անընդմեջ նվաճեցին աշխարհի չեմպիոնի կոչումը: Չեխերը պարգեւատրվեցին ոսկե, սլովակները՝ արծաթե մեդալներով:

Բրոնզե պարգեւների համար պայքարում հանդիպեցին Ֆինլանդիայի եւ Կանադայի հավաքականները: 2-1 հաշվով հաղթեցին ֆինները:

ՖՈՒՏԲՈԼ

Հանդիպումը կիսաս մնաց

Հայաստանի «Անկախության» գավաթի կիսաեզրափակիչի պատասխան հանդիպումը «Կիլիկիայի» եւ «Զվարթնոցի» միջեւ չավարտվեց: 51-րդ րոպեին «Կիլիկիայի» պետ Ալեքսանդր Սարգսյանի ցուցումով թիմը դուրս եկավ դաշտից՝ հրաժարվելով շարունակել խաղը: Իսկ ի՞նչ էր պատահել մինչ այդ: «Կիլիկիայի» գրոհի ժամանակ Արսավազդ Քարամյանը մրցակցի տուգանային հրապարակում վայր ընկավ: Մրցավար Արարատ Ճաղարյանը համարելով, որ ֆուտբոլիստը ձեւացնում է, դեղին քարտ ցույց տվեց նրան: Ընդհակառակը, թիմի պետ Սարգսյանի կարծիքով, «Զվարթնոցի» խաղացողները խախտել էին կանոնները, ինչի համար մրցավարը պարտավոր էր 11 մ տուգանային հարված նշանակել հյուրերի դարպասին:

Ահա այսպես. արտաքոց դեպք մեր ֆուտբոլում: Ասենք, որ չնայած 38-րդ րոպեին Սերգեյ Երզրումյանի («Կիլիկիա») եւ Սեւադա Արզումանյանի («Զվարթնոց») փոխադարձ կոպտությանը (որի համար նրանք դաշտից հեռացվեցին), ամբողջ խաղի ընթացքում կոռեկտ պայքար էր ընթանում: Թիմի ֆուտբոլիստները, չնայած գործադրած ջանքերին, չէին կարողացել մեկմեկու դարպաս գրավել՝ 0-0 (իսկ առաջին խաղում «Զվարթնոցը» հաղթել էր 1-0 հաշվով): Փաստորեն «Զվարթնոցը» գավաթի խաղարկության եզրափակիչ հանդիպման մասնակից դարձավ:

Մայիսի 27-ի կայանալիք վճռական խաղում նրա մրցակիցը կլինի Աշտարակի «Միկան», որը մյուս կիսաեզրափակիչի պատասխան հանդիպման ժամանակ 4-3 հաշվով հաղթեց Երեւանի «Արարատին»: Հիշեցնենք, որ այս թիմերի առաջին խաղում ոչ-ոքի՝ 1-1 էր գրանցվել: Գոլառաս այս հանդիպման հաշիվը բացվեց 41-րդ րոպեին. դաշտի տերերի դարպասը գրավեց արարատցի Տիգրան Եսայանը: Երեք րոպե անց աշտարակցի Ալբերտ Ամեմյանը հավասարեցրեց հաշիվը՝ 1-1: Երկրորդ խաղակեսի սկզբում (50՝) հենց նա էլ առաջ մղեց «Միկային»: Թերեւս, բեկումնային էր 62-րդ րոպեն: «Արարատի» դարպասապահ Գեորգի Խաչատրյանը դուրս վազեց իր տուգանային հրապարակից եւ առաջ սլացող Սամվել Նիկոլյանին կոպտորեն վայր գցեց, ինչի համար հեռացվեց դաշտից: Դրանից հետո «Արարատի» մարզիչները պաշտպան Ալեքսանդր Թադեւոսյանին փոխարինեցին պահեստային դարպասապահ Արմեն Առաքելյանով: Մնացած ժամանակամիջոցում թիմերն իրար փոխնի-փոխ երկուական գոլ խփեցին, ինչը միանգամայն բավարարում էր աշտարակցիներին: «Միկայից» աչքի ընկան Արսեն Դալլաքյանը (63՝), Աբրահամ Խաչմանյանը (74՝), «Արարատից»՝ Հովհաննես Անտոնյանը (71՝), Արա Նիգոյանը (82՝):

ՖՈՒՏԲՈԼԻ ԵՐԱԲՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մրցեցին պատանեկան հավաքականները

Իսրայելում անցկացված Եվրոպայի մինչեւ 16 տարեկան ֆուտբոլիստների առաջնությունում հաղթեց Պորտուգալիայի հավաքականը: Եզրափակիչ խաղում պորտուգալացիները, մրցելով Չեխիայի իրենց հասակակիցների հետ, առաջինը գոլ բաց թողեցին սեփական դարպասը, բայց հետո կարողացան հավասարեցնել հաշիվը, իսկ լրացուցիչ ժամանակում խփելով վճռական գոլը եւ հաղթելով 2-1 հաշվով, նվաճեցին աշխարհամասի չեմպիոնի կոչումը:

Բերեզովսկին կխաղա «Մենք Էթիենում»

Ռուսաստանի առաջնության 8-րդ տուրի ԲԿՄՍ-«Զենիթ» խաղից հետո Սանկտ Պետերբուրգի թիմի գլխավոր մարզիչ Յուրի Մորոզովը հայտարարեց, որ թիմի դարպասապահ Ռոման Բերեզովսկու՝ ֆրանսիական «Մենք Էթիեն» տեղափոխվելու հարցը լուծված է: Թեեւ տեղափոխման որոշ հարցեր գաղտնի են պահվում, հայտնի է դարձել, որ ֆրանսիացիները «Զենիթի» եւ Հայաստանի հավաքականի դարպասապահի համար պետերբուրգյան ակումբին մի կլորիկ գումար են վճարելու՝ 40 մլն ֆրանկ (ավելի քան 5 մլն դոլար): Հետաքրքիր է, որ «Մենք Էթիենի» ղեկավարներն իրենց թիմում տեսնել ցանկանում են նաեւ «Զենիթի» լավագույն հարձակվող Ալեքսանդր Պանովին: Նրա տեղափոխվելու շուրջ այժմ բանակցություններ են ընթանում: Այո՛, «Զենիթը» թուլանում է...

Գասկոյնը տեղափոխվում է Ավստրալիա...

Սկանդալային համբավ վայելող անգլիացի ֆուտբոլիստ Պոլ Գասկոյնը, որն այժմ հանդես է գալիս «Միդլսբրոյում», հաջորդ մրցաշրջանում կխաղա ավստրալական «Յունդելաղ սիթի» ակումբի կազմում: Այս թիմում է հանդես գալիս նաեւ «Տոտենհեմի» եւ Անգլիայի հավաքականի նախկին խաղացող Քրիս Ուոդլը: Հետաքրքիր է, որ Գասկոյնը «Յունդելաղ սիթին» ընտրել է հիմնականում այն պատճառով, որ ակումբի ղեկավարները նրան խոստացել են բարձրակարգ ծկնորսության հնավորություններ ստեղծել:

...Իսկ Ժարդելը՝ Իտալիա

Պորտուգալիայի վերջին տարիների առաջնությունների անփոփոխ ռմբարկու, բրազիլացի Մարիո Ժարդելն ամենայն հավանականությամբ հաջորդ մրցաշրջանում հանդես կգա իտալական «Ռոմայում»: Շուտով «Պորտոն» եւ «Ռոման» պայմանագիր կկնքեն: Ֆուտբոլիստի գործակալի կարծիքով, այդ տեղափոխությունն անհրաժեշտ է, քանի որ իտալական առաջնությունն ավելի ուժեղ է, քան պորտուգալականը: Հաջող խաղալով Իտալիայում՝ Ժարդելը կարող է Բրազիլիայի հավաքականում հանդես գալու հույս ունենալ (արդյունավետ հարձակվողն իր երկրի ընտրանիում դեռեւս չի ընդգրկվել): Նշենք, որ «Ռոմայում» արդեն իսկ հանդես են գալիս մի քանի բրազիլացի ֆուտբոլիստներ՝ Կաֆուն, Ալդաիրը, Ֆաբիո Ժունիորը, Մարկուս Ասունսանը, Անտոնիո Կաուլոսը:

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված մրցանակային սկանվորդի պատասխանները

Ուղղահայաց

1. Անգուր: 2. Մայել: 3. Մինաս: 4. Տիգ: 5. Հարիսա: 6. Վիուկ: 8. Գաբա: 10. Տանիմ: 12. Սան: 14. Արա: 16. «Հուդիթ»: 19. Շտրաուս: 23. Սա: 26. Դոյլ: 29. Ուելս: 31. Մանն: 33. Արի: 35. Ալբայ: 36. Նոմա: 38. Նաբաթ: 40. Ավ: 42. Ագի: 43. Որ: 45. Նա: 50. Դալի: 51. Կամո: 53. Խոյ: 54. Այո: 55. Լադ: 56. Կոդ:

Հորիզոնական

7. Վանգա: 9. «Իտառ»: 11. Գայոս: 13. Նազար: 15. Հուտոլֆ: 17. Աբար: 18. Նիշ: 20. Մուկ: 21. Թալին: 22. Սադիսս: 24. Քար: 25. Իդա: 27. Թո: 28. Յու: 30. Կոմս: 32. Կալե: 34 Կանն: 37. Լինս: 39. Լեո: 41. Գաբո: 44. Վանա: 46. Գար: 47. Յա: 48. Վիթ: 49. Սոսե: 52. Խալ: 57. Գոյա: 58. Յոդ: 59. Պիկասո:



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ: 6. Արծանի «մականուններից»: 7. Գյուղական «կառ»: 8. Վանաձոր-Ստեփանավան ճանապարհին: 10. Մաթեմատիկական «դուեց»: 11. Մեսաֆսագործությունը «հնարավոր դարձնող» ծառ: 14. Եվ թղթախաղ, եւ գործվածք, եւ պար: 15. Փարիզի Թյուիլրի այգում կարելի է տեսնել Սեզանին նվիրված նրա հուշարձան-ֆանդակը: 16. «Էքսրա» եւ հետեւագոր, եւ հեծելագոր: 18. «Մասիսում չափսերով» մարդ: 20. Հետմահու «նվիրատվություն»: 22. Լեհական ազգային պարահանդեսային պար: 23. Հնդիկին «դասակարգող» «համարություն»: 24. ԽՍՀՄ լավսան, ճապոնիա տեսերոն, ԱՄՆ ...: 25. Գորտի եղբայրը: 27. Որեւէ մեկի մասին հատուկ նոթատակով հավաքվող տեղեկությունների ամբողջություն: 28. «Ամերիկացի» ջայլամ: 29. «Կես դրույքով» սենյակ: 30. Ոչ ոք չէր ուզում, որ նա կատաղեր:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ: 1. «Խենթի» «քույր» վեղը: 2. «Հանդարտաբարո» ուռուցք: 3. Երաժշտական «վարգ»: 4. Վենետիկյան «տախտ»: 5. Թռչուն-«որսորդ»: 9. Ժամանակակից Հնդկաստանի խորհրդանիշը: 12. Անտառի «կերպարային խտացումը»: 13. Ներգաղթվածը՝ բնիկների համար: 14. Մակլերների «թատրոն»: 17. Եւ կայանատեղի, եւ մարզկենտրոն ՀՀ-ում: 18. «Թշվառների» ֆրանսիացի մեծ կարեկիցը: 19. «Շոկոլադի» ծառը: 21. Մորիս Մուսանգերի համար լաստ, մեզ համար ...: 22. Նախկինում միայն Ե. Քոչարը, իսկ այժմ Օ. Դուրանը, Լ. Ճգնավորյանը եւ այլք: 23. Ըստ Օկուջավայի «հմայիչ» կրտսեր սպայական կոչում: 25. Անթերի հագնված նրբակիրթ լոնդոնցի, ջենտլմեն: 26. Ֆուտբոլի, մարտի, «հրաշքների» ասպարեզ: 27. «Անզուգական» Վլադիմիր Վոլֆովիչի «թատերաբեմը»:

Շաբաթօրյա «Ազգի» մրցանակային սկանվորդը ճիշտ լուծել եւ արժեքավոր մրցանակին է արժանացել «ՀՀ երկաթուղու փոխադրումներ» ՊՓԲ ընկերության աշխատակցուհի Արփինե Արվազյանը:

Մրցանակային հաջորդ խաչբառը կտպագրվի «Ազգի» մայիսի 20-ի համարում:

Փորձե՛ք լուծել, եւ արժեքավոր մրցանակը Ձե՛ռն է:

ԱԶԳ

Օրվա հեռանկար

ՄՈՍԿՎԱ

ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն փորձում են սեղմ խրել Հայաստանի եւ Ռուսաստանի հարաբերություններում

Սկիզբը էջ 1

Միեւնույն ժամանակ գեներալն ընդգծել է, որ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ռազմական ու ռազմավարական համագործակցությունը կայացած փաստ է, եւ ըստ էության, Անդրկովկասում ռազմական հավասկեռի, ինչպես նաեւ ողջ տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահպանման երաշխիք է: Նրա խոսքերով, երկու պետությունների զինվորական դեկավարությունը կառուցվածքային քաղաքականություն է վարում նպատակաուղղված անվտանգության ապահովման արդյունավետ մեխանիզմների ամրապնդմանը, այդ թվում նաեւ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի (ԿՆՊ) շրջանակներում: Իմիջիայլոց, մայիսի 15-ին նշվում է Պայմանագրի ստորագրման 8-րդ տարեդարձը:

Իվաշովի խոսքերով, Հայաստանն ակտիվորեն մասնակցում է ԿՆՊ-ի շրջանակներում բոլոր գործընթացներին, մասնավորապես հակաօդային պաշտպանության ոլորտում: Հայաստանը մեծ ավանդ է ներդնում «ԿՆՊ-ի մասնակից երկրների անվտանգության զարգացման գործում», ասել է Իվաշովը ընդգծելով, որ Ռուսաստանն անկեղծորեն հույսեր է տածում Հայաստանի հզորության պահպանման վերաբերյալ, քանի որ «մեր երկրների թուլությունը մեր թշնամիների մոտ այդ հանգամանքից օգտվելու ցանկություն է հարուցում»: «Իսկ մեր թշնամիները բազմաթիվ են», ընդգծել է գեներալը դրա հետ մեկտեղ նշելով, որ հայոռուսական ռազմական եւ ռազմավարական համագործակցությունն ուղղված չէ երրորդ երկրների դեմ եւ գործում է երկու երկրների միջազգային պարտավորությունների շրջանակներում:

Ռուսաստանը դեմ է ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի անմիջական մասնակցությանը համակովկասյան անվտանգության համակարգին: «Ամերիկյան ռազմական ներկայությունն անվտանգ չէ այդ տարածաշրջանի համար», հայտարարել է Լեոնիդ Իվաշովը: Սնարի թղթակցի խնդրանքով մեկնաբանելով Ռուսաստանի զինվորական դեկավարության վերաբերմունքն անվտանգության համակովկասյան համակարգի ձեւավորման առնչությամբ եղած առաջարկություններին:

Նրա խոսքերով, այդ գաղափարը հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի, Իրանի եւ Թուրքիայի համար, սակայն «բոլորից ֆիզ շոշափում է ամերիկացիների շահերը: «Ամերիկացիների ներկայությունը Հարավային Կովկասում չի ավելացնի այդ տարածաշրջանի անվտանգությունը», հայտարարել է Իվաշովը դրա հետ մեկտեղ ընդգծելով, որ հանգամանքների նման դասավորությունն անընդունելի է Ռուսաստանի համար:

Գեներալը, մասնավորապես, անդրադարձել է ՆԱՏՕ-ի ընդլայնման խնդրին եւ Հյուսիսատլանտյան դաշինքին նախկին խորհրդային հանրապետությունների անդամակցության հնարավորությանը: «ՆԱՏՕ-ին ԱՊՀ երկրների անդամակցությունը վտանգավոր է եւ կարող է պայթեցնել իրավիճակը», նշել է Իվաշովը ընդգծելով, որ «Ռուսաստանը երբեք չի հաշտվի այն բանի հետ, որ ՆԱՏՕ-ի սահմանն անցնի Պսոու գետով» (աշխարհագրական սահմանը Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ-Սնարֆ): Միեւնույն ժամանակ, Իվաշովը նշել է, որ յուրաքանչյուր պետություն իր անվտանգության ապահովման վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունք ունի, բնականաբար այդպիսի իրավունք ունի նաեւ Ռուսաստանը:

«Մենք ձեռնարկում ենք բոլոր անհրաժեշտ միջոցները մեր եւ մեր դաշնակիցների անվտանգության ապահովման համար», ընդգծել է Լեոնիդ Իվաշովը:

AED
Academy for Educational Development

USAID

CHEMONICS INTERNATIONAL INC

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Կրթության զարգացման ակադեմիան (AED) եւ Քեմոնիքս ինթերնեշնլը

տեղեկացնում են

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ AED-ի «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը տեղի կունենա մայիսի 19-ին, ժամը 11:30-ին, Թեքեյան կենտրոնում (Խանջյան 50):

Հանդիպմանը կմասնակցեն

ՀՀ սանդարտների ազգային ինստիտուտի փոխտնօրեն

Կարլեն Ադամյանը,

Հայաստանի սպառողների միության նախագահ

Արմեն Պողոսյանը:

Թեմա՝ «Արտադրանքի եւ ծառայությունների որակի վերահսկման չափանիշներ եւ համակարգեր. պետական եւ հասարակական կառույցների համագործակցությունը Հայաստանում որակի վերահսկման միջազգային չափանիշների հաստատման գործում»:

Հանդիպումից հետո՝ ժամը 13:30-ին, տեղի կունենա տնտեսական եւ իրավաբանական թեմաներով գրող լրագրողների համար Քեմոնիքս ինթերնեշնլի կազմակերպած սեմինարների շարքի հերթական թեմայի ներկայացումը:

«ՀՀ դասական համակարգը»

թեմայով հանդես կգա

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական եւ զինվորական գործերով պալատի նախագահ

Միհր Խաչատրյանը:

ARMENTEL

Հայտարարություն

Արմենտելը հայտարարում է մրցույթ՝ Երեւան քաղաքի Զեյթուն 23/24/26 (30.000 ունակությամբ բաժանորդային գիծ), Կոմիտաս 22/26/27 (30.000 ունակությամբ բաժանորդային գիծ) եւ շրջանների Եղեգնաձոր (5.000 ունակությամբ բաժանորդային գիծ), Սոլիտակ (2.500 ունակությամբ բաժանորդային գիծ), Վանաձոր-6 (6.000 ունակությամբ բաժանորդային գիծ) նոր տեխնոլոգիաների կիրառմամբ հեռախոսային բաժանորդային ցանցի շինարարության աշխատանքների կատարման համար: Այն շինարարական կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին՝ պետք է.

Ունենան տվյալ աշխատանքների կատարման համար պահանջվող պետական լիցենզիաները,

Ներկայացնեն տվյալներ կազմակերպության ներկայիս ֆինանսական վիճակի մասին (հաշվարկային հաշվում եղած գումարի չափը, դեբիտորներ, կրեդիտորներ՝ առանձնացված անուններով ու գումարներով եւ այլն)

Գրանցված լինեն պետական ռեգիստրում առնվազն 1,5 տարի եւ նշեն, թե այդ ժամանակահատվածում որտեղ եւ ինչ ծավալների նմանատիպ աշխատանքներ են կատարել:

Մրցույթի անցկացման պայմանները եւ աշխատանքների ծավալները շահագրգռված կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով՝ Արմենտել ՀՁ ՓԲԸ, Սիարոնյան 2, 6-րդ հարկ, 634 սենյակ, հեռ.՝ 28-70-66:

Մրցույթի մասնակցության արժեքը կազմում է 50 հազար դրամ (անվերադարձ), որը պետք է վճարվի Արմենտել ՀՁ ՓԲԸ հաշվին (Սարյան 22, «Հայկաթբանկ» ՓԲԸ հ/հ 15100100560303): Վճարման անդորրագիրը պետք է ներկայացնել մրցույթի փաթեթը ստանալիս:

Առաջարկությունների ներկայացման վերջին ժամկետը՝ 2000 թ. մայիսի 30-ը, ժամը 12-ը:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ (ՀՀԱԱ) ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԹԵՄԱՅՈՎ

Դասընթացները նախատեսված են ոչ հաշվապահների համար: Դասընթացների նպատակն է հաշվապահական հաշվառման բնագավառում չմասնագիտացված անձանց ծանոթացնել ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ օգտագործման սկզբունքներին: Ուսումնասիրվող թեմաները հետեւյալն են՝

1. Հաշվային տեղեկատվական համակարգը
2. Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն
3. Տնտեսական որոշումների ընդունում

Առաջարկվող դասընթացների տեւողությունը կազմում է 12 ժամ: Նախնական հաշվապահական կամ տնտեսագիտական կրթությունը պարտադիր չէ: Դասընթացներն ընթանալու են երեք տարբերակված խմբերում՝

Արժեթղթերի շուկա

Դասընթացը նախատեսված է արժեթղթերի շուկայի աշխատակիցների համար եւ տեղի կունենա մայիսի 24-26-ը, ժամը 13:00-17:00:

Գյուղատնտեսության բնագավառ

Դասընթացը նախատեսված է գյուղատնտեսության բնագավառի աշխատակիցների համար եւ տեղի կունենա մայիսի 23-25-ը, ժ. 13:00-17:00:

Արտադրական ձեռնարկություններ

Դասընթացը նախատեսված է ձեռնարկությունների ղեկավար կազմի համար եւ տեղի կունենա մայիսի 30-ից հունիսի 1-ը, ժամը 13:00-17:00:

Դասընթացներին հերթագրվելու եւ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար դիմել Անահիտ Խաչատրյանին (ժ. 12:00-18:00) հետեւյալ հեռախոսահամարներով՝ 54-16-65, 24-93-19, 24-93-19, 24-93-29, 24-91-78, 24-94-67 կամ դիմել ՀՀԱԱ, Կարապետ Ուլնեցու 31, V հարկ (Ադոնցի անվան էկոնոմիկայի ինստիտուտի շենքը):

Դասընթացներն անվճար են, տեղերը՝ սահմանափակ:

ՀԵՌՈՒՍՏԱՑՐԱԳԻՐ

Գ1

9.00 Հայլուր
9.20 Հեռուստաերիա «Սուրճ կնոջ բարմենով»
10.10 Իմ տունը
10.20 Մանուկի կրթակ
10.30 «02»
11.00 Գ/Թ «Ոսկանս կոմնոջի համար»
12.20 Կուլիսների ետեւում
12.40 Քարի ախտրակ
13.00 Հայլուր
13.20 Ուրիկոն+
17.00 Հայլուր
17.20 Սեքսուալ բաղնիք
18.00 Հեռուստաերիա «Սուրճ կնոջ բարմենով»
19.00 Լուր
19.10 «Հեռուստաքոռ»
Նույն ժամին արբանյակային հեռարձակմամբ
19.10 Կեսգիշերային ճեղքաց
20.00 Քեզանից է սկսվում հայրենիքը
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տունտունիկ
21.00 Հայլուր
21.40 Պրեմիերա
21.55 Գ/Թ «Վենկոր»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ճեղքաց
01.00 Ուրիկոն+

Պրոմեթեւս

9.00 «Քարի լույս. Հայաստան»
10.00 «Մենք ինչ հանուն էն պրոն»
18.00 Սպորտֆիլմ
18.10 Մանկական ժամ. սերիալ «Կինոյա կրիաները», սերիալ «Քոնան»
19.00 «Մենք ինչ հանուն էն պրոն»
20.00 Լուրեր
20.35 «Հարցեր»
21.20 Օրդ
22.30 «Ժեղնահարկ»
22.50 Սարգսյանին անցած ճաշաք
23.15 Գ/Թ «Հաղորդության թեթեւնները»

Ֆ

9.00 Տոնար
10.30 Սեքեղ (կրկնություն)
11.00 Սվեսա
19.05 Ղղիկ
19.30, 21.30, 24.00 Սուրհանդակ
20.00 Մանուկի խոսնակ
20.10 Հնարի
20.30 Սատարեց
21.10 Հրատարակ
22.05 Գ/Թ «Ճնշումները հեռանում է երկնքի»
0.35 Սկզբարք
0.40 Գ/Թ «Բոնի եւ Քլայդ» (ամերիկյան Սուրհանդակ)

Գ1

7.00 Քարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնոտ թույն»
16.00 Նորություններ
16.20 Վիկտորինա երեխաների համար
16.35 Պատանի գլադիատորները «Լեռան արեւ» ժապավեն
17.00 ...Մինչեւ 16 եւ քարեր
17.35 Սերիալ «Տատասանի ուղիներով»
19.00 Նորություններ
19.30 ԿԲՀ-մոլորակ
20.00 Սոյասիր ինձ
20.45 Սերիալ «Քնոտ թույն»
21.45 Քարի գիշեր. երեխաներ
22.00 Ժամանակ
23.00 Գ/Թ «Շախ ադամանդների թագուհուն» (դերերում Լ. Պատյուրե, Գ. Ֆիլիպի, Ռ. Դուրոքս, 1973 թ.)
00.45 Նշանավոր մարդկանց կյանքը
01.20 Նորություններ
01.35 Սերիալ «Ուրբաթ, 13-ը»

ՌՏՊ

7.00, 8.00, 9.00, 10.00 Լուրեր
7.20-10.30 Քարի լույս. Ռուսաստան
7.35, 9.35 Ընտանեկան նորություններ
9.20 Հեռուստատեսային ՀՍՍ. հերթական բաժանումներ
10.35 «Արենա-սպորտ»
11.05 Սպորտֆիլմ «Կոկավոր կատուն»
11.25 Գ/Թ «Սասանյան գոռ» (ԱՄՆ)
13.00 Հեռուստատեսային ՀՍՍ
13.30 Իմ XX դարը

16 մայիս

14.00, 18.00, 21.00 00.00 Լուրեր
14.30 «Կանանց հարց»
15.00 Մայլ Քիթոնը «Մաքուր եւ սրտի» ֆիլմում (ԱՄՆ)
17.00 Երկխոսություններ կենդանիների մասին
18.30 Աստղակ
18.55 Մանուշակագույն ժամը
19.25 «42-ը» ներկայացնում է
20.25 «Մանկան տարթով»
21.40 Սերիալ «Կայրի հրեշակը»
22.40 Սերիալ «Վերջին Դոնը»
00.35 Կինոյի ժամ. դրամատիկ Վասի Գոլդբերգը. Ալեք Բոլդուինը «Մինիսիպիի ուրվականները» ֆիլմում (ԱՄՆ)
02.55 Հեռուստատեսային ՀՍՍ. հերթական բաժանումներ

@rmineo Global Telecommunications

Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Պատվեր 1259 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 15. 05. 2000 Գինը՝ 100 դրամ